ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Վերնագրված 1922

7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 թ.

№ 13 (1168)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանի շնորհավորական ուղերձը Սեպտեմբերի 1-ի առթիվ

Սիրելի՛ ուսանողներ և աշակերտներ, հարգելի՛ դասախոսներ, ուսուցիչներ, գործընկերներ և մեր մեծ կրթական ընտանիքի բոլոր անդամներ:

Սեպտեմբերի 1-ը նոր ուսումնական տարվա սկիզբն է, բայց, ամենակարևորը՝ նոր հնարավորությունների սկիզբը: Այսօր առանձնահատուկ ջերմությամբ շնորհավորում եմ մեր առաջին կուրսեցիներին, ովքեր առաջին քայլն են անում դեպի մասնագիտական մեծ ճանապարհ, և ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցի ու վարժարանի մեր աշակերտներին, հատկապես՝ 10-րդ դասարան ընդունվածներին, ովքեր այսօրվանից դառնում են մեր մեծ ընտանիքի նոր անդամները:

Սիրելի՛ սովորողներ, թող այս տարին ձեզ համար լինի ոչ միայն գիտելիք ամբարելու, այլև հմտություններ զարգացնելու, սեփական ուժերը բացահայտելու, հարցեր տալու, սխալվելուց չվախենալու և ձեր արժեքային աշխարհը ձևավորելու տարի: Հիշե՛ք՝ կրթությունը միայն այն չէ, թե որքան գիտես. կրթությունն այն է, թե ինչպիսի մարդ ես դառնում քո իմացածի շնորհիվ: Մեր ուսուցիչներին և դասախոսներին մաղթում եմ նույն մեծ եռանդով շարունակել ոչ միայն գիտելիք փոխանցել, այլև ոգեշնչել, հավատ ներշնչել և վառել այն հետաքրքրությունը, որը սովորողին դարձնում է ինքնուրույն մտածող ու ստեղծագործ անհատ: Իսկ մեր ամբողջ անձնակազմին՝ շնորհակալություն այն ամենի համար, ինչ հաճախ չի երևում, բայց առանց որի կրթությունը չի կայանա: Ձեր աշխատանքով է ստեղծվում այն ապահով, բարեկեցիկ, արդյունավետ և մարդակենտրոն միջավայրը, որտեղ յուրաքանչյուր աշակերտ, ուսանող և աշխատակից կարող է բացահայտել իր ներուժն ու հասնել հաջողության: Եվ թող այս ուսումնական տարվա մեր ընդհանուր կարգախոսը լինի՝ «Սովորե՛լ՝ ավելին իմանալու համար, զարգանալ՝ ավելին կարողանալու համար, արժեքներ ձևավորել՝ ավելի լավ մարդ դառնալու համար, և միասին աշխատել՝ ավելի լավ ապագա կառուցելու համար»:

Բարի՛ գալուստ նոր ուսումնական տարի: Բարի՛ գալուստ մեր մեծ ընտանիք:

Շնորհավո՛ր սեպտեմբերի 1-ը:

ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց բոլորին և ընդգծեց, որ ամեն ինչի հիմքում ուսուցչի աշխատանքն է: Նա հորդորեց գնալ երազանքների հետևից, դրանք նպատակներ դարձնել և իրականացնել, նաև անդադար սովորել արագ փոփոխվող աշխարհում:

Գիտելիքի և դպրության օրը Մանկավարժական համալսարանում խորհրդանշվեց ուսումնական տարվա առաջին օրվա հանդիսավոր արարողություններով. առաջին կուրսեցիների դիմավորում, ծանոթացում ֆակուլտետների կառուցվածքներին ու գործունեությանը, հանդիպումներ պրոֆեսորադասախոսական կազմի հետ, շնորհավորական ելույթներ ջերմ միջավայրում:

Եվս մեկ սերունդ ոտք դրեց համալսարանի շեմից ներս՝ կրթվելու, գիտելիքներ ամբարելու և նվիրվելու ուսուցչի առաքելությանը, որը սոսկ մասնագիտություն չէ, այլ կոչում ու ի վերուստ տրված շնորհ: Այս գիտակցությամբ են ապագա մանկավարժները դիմել Մանկավարժական, այս գիտակցումով են տոգորվել աշխարհի ամենամարդասիրական մասնագիտության կրթօջախ դիմելուց առաջ: Եվ ահա առաջին քայլը, առաջին հուզմունքը, առաջին ծանոթությունները...

Սեպտեմբերի 1-ին ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը պրոռեկտորներ Նաիրա Սաֆարյանի, Մարիամ Իսպիրյանի և գիտքարտուղար Հակոբ Թադևոսյանի հետ շրջայց կատարեց համալսարանի ավագ դպրոց-վարժարանում և համալսարանի ֆակուլտետներում: Նա շնորհավորեց առաջին կուրս ընդունված աշակերտներին և ուսանողներին:

Այս տարի համալսարանի ավագ դպրոց–վարժարանի 10-րդ դասարան է ընդունվել 158 սովորող: Տարբեր հոսքեր ընդունվածներին Լիլիթ Մկրտչյանը հարցրեց մասնագիտությունն ընտրելու դրդապատճառների մասին, հետաքրքրվեց տարիներ հետո ինչ աշխատանք են երազում ունենալ և ընդհանրապես հեռահար նպատակների ու երազանքների մասին:

2026-2027 ուսումնական տարում Մանկավարժական համալսարանն իր դռները բացեց առկա ուսուցման համակարգում բակալավրիատ և մագիստրատուրա ընդունված 1087 ուսանողի առջև:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ղեկավար կազմի հետ եղավ բուհի 10 ֆակուլտետներում, շնորհավորեց ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմին և 1-ին կուրս ընդունված ուսանողներին՝ մաղթելով նրանց նպատակասլացություն, հետաքրքրասիրություն և մասնագիտական նվիրում:

Նա ընդգծեց, որ Մանկավարժականի ուսանողներին վստահված է առանձնահատուկ պատասխանատվություն, որ նրանք ընտրել են մի մասնագիտություն, որը պարզապես աշխատանք չէ: Դա ամենակարևոր առաքելություններից մեկն է՝ կրթել, դաստիարակել և ձևավորել հաջորդ սերունդներին:

«Համալսարանն այն միջավայրն է, որտեղ սահմանվում են նոր նպատակներ՝ գիտելիքները խորացնելու և սեփական հնարավորություններն ընդլայնելու հեռանկարով: Սա դասախոս-ուսանող համատեղ մտածելու, սովորելու և արարելու միջավայր է, որտեղ յուրաքանչյուր ուսանող պետք է կարողանա օգտվել իրեն ընձեռած հնարավորություններից»,- ընդգծեց Լիլիթ Մկրտչյանը:

Համալսարանական № 57 դպրոցն այս տարի ունի երկու առաջին դասարան՝ 52 աշա-

➤2

Շրջահայաց եղեք, սիրեցե՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցե՛ք միմյանց:

Ղևոնդ Ալիշան

1 կերտով, իսկ դպրոցի աշակերտների ընդհանուր թիվը 520 է: Անցյալ տարի դպրոցն ավարտեց 67 շրջանավարտ, իսկ այս տարի երեք իններորդ դասարանների նույնքան շրջանավարտներ հրաժեշտ կտան դպրոցին: Պետք է ընդգծել, որ համալսարանական դպրոցը պատվով է իրականացնում սերնդակրթության գործը, գիտելիքներից բացի մարդկային լավագույն հատկանիշներ է ձևավորում իր շրջանավարտների մեջ և ավագ դպրոց ճանապարհում:

Սեպտեմբերի 1-ին դպրոցի բակում նորից տոնական աշխույժ եռուզեռ էր. դպրոցականները ներկայացրին «Երթուղի №57». հետաքրքիր դիպվածով դպրոցականների ավտոբուսը հայտնվեց Բարության, Ընկերության, Ազնվության և Հայրենասիրության կանգառներում, ապա հանգրվանեց վերջին՝ Գիտելիքների կանգառում: Դպրոցականները կարևորեցին այն հիմնական արժեքները, որոնք ուղեկցում են իրենց ինը տարիների ընթացքում:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը շնորհավորեց բոլոր դպրոցականներին ու նրանց ծնողներին, բարի երթ մաղթեց բոլորին, ընդգծելով, որ մի մասի համար սա գիտելիքների ձեռքբերման առաջին տարին է, մի մասի համար՝ վերջին, բայց ամենակարևորն այն է, որ այստեղ բոլորը կարողանան իրականացնել իրենց նվիրական ցանկությունները, արդարացնել ուսուցիչների հույսերը և ապրեն խաղաղ երկնքի ներքո:

Ավագ դասարանցիներն էլ նորեկներին հիշեցրին՝ այս դպրոցում կսովորեն լինել լավ մարդ, որը գիտելիքներից ամենակարևորն է. «Այսօրվանից սկսվում է ձեր ճանապարհը: Գուցե դեռ չգիտեք, թե ինչ մասնագիտություն եք ընտրելու, ինչ երազանքներ եք իրականացնելու: Բայց մի բան հաստատ է՝ այս դպրոցում դուք կսովորեք լինել լավ մարդ: Իսկ դա ամենամեծ գիտելիքն է: Բարի գալուստ մեր մեծ ընտանիք...»:

Սիլվա Ասրյան

ՈՒՍՈՒՑՉԻՆ մեծարելու պատիվը

Երանի այն ուսուցիչներին, ովքեր իրենց դպոցների մուտքին դիմավորելու են աշակերտներին, և նույնքան երանի այն աշակերտներին, ովքեր «Բարի գալուստի» ժպիտներ են ստանալու ուսուցիչներից:

Ուրեմն սեպտեմբերյան ողջույն բոլոր, բոլոր ուսուցիչներին: Նախ՝ Մեծն Կոմիտասի հորդորը ձեզ. «Ուսուցիչ պարոննե՛ր ու քոյրե՛ր, զգուշութեամբ ու երկիւղածութեամբ մօտեցէ՛ք դաստիարակութեան գործին. խիստ փափուկ պաշտօն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված էք սերունդ մը, որ ապագայ ազգն է...»:

Տա Աստված, որ նրանք աշխարհին բաժանած իրենց բարությանը ԿԱՐՈՏ ՉՄՆԱՆ:

Սեպտեմբեր 1-ից զատ ուրիշ ավելի կատարյալ տոն, իմ կարծիքով, չկա ուսուցչի համար...

Այսօր բոլոր ծաղիկները տարվում են մեն մի հասցեով, որի դռանը մեծ, գունազարդ տառերով գրված է՝ ՈՒՍՈՒՑԻՉ

Բացում ես այդ կախարդական դուռը, և ներսում՝ ժպիտ, բարություն, նվիրում, սեր, շա՛տ սեր...

Ոտքերիդ փոշին մաքրիր, նոր մտիր, խաղաղ, ջերմ հայացքով նայիր ներսում քեզ ժպտացողին՝ նրա այդ ժպիտի մեջ այքա՛ն շատ է բարությունը, քնքշանքը, գորովն ու սերը:

Դու էլ ժպտա ծաղիկները նրան մեկնելիս, նայիր, թե նա ինչպես է ընդունում դրանք – նախ գեղեցիկ ժեստով իր նույնքան գեղեցիկ գլուխը շատ թեթևակի կխոնարհի (դա քեզ համար աստվածային պարգև է), հետո ծաղիկներն անպայման դեմքին կմոտեցնի.

-Օօօ, ի՜նչ անուշ են բուրում,- ու նոր քեզ կմեկնի ձեռքը՝ նաև այ՛դ կերպ շնորհակալությունը հայտնելու: Ուշադիր նայիր, թե ինչ դիրքով է քեզ մեկնած այդ նուրբ ձեռքը. եթե ափը ներքև է, ուրեմն դու պիտի համբուրես այդ սուրբ ձեռքը (դա քեզ համար աստվածային երկրորդ պարգևն է):

Գիտեմ, հիմա աշխարհով մեկ եղար, որ գոհացրիր ՈՒՍՈՒՑՉԻՆ, որ քո մի ափ սրտի մեջ ու քո հոգու մեջ մի ջերմ զգացում խլրտաց՝ դու ՈՒՍՈՒՑՉԻՆ մեծարելու պատիվն ունեցար:

Հիմա արդեն կարող ես ասել.

-Շնորհավոր Ձեր տոնը, իմ կյանքի ուղեկից, իմ սլացքի ուղին օրհնաբարող, ինձ միտք ու իմ թռիչքին թևեր տվող առաքյալ...

Սեպտեմբեր 1-ից զատ ուրիշ ավելի կատարյալ տոն, իմ կարծիքով, չկա ուսուցչի համար: Ինչպես է պատրաստվո՛ւմ նա այդ օրվան – ինչպես հարսանիքի օրը հարսին են հագցնում, զարդարում, այդպես էլ, իմ կարծիքով, ուսուցիչն է այդ օրը զարդարվում, կոկում իրեն՝ նա այդ օրը պիտի անկրկնելի կրկնությունների մեջ նորովի՛ երևա...

Ուսուցիչն այդ օրը, որքան էլ փորձառու՝ ներքին ապրումներ ունի, որ ոչ վախ է, ոչ անհանգստություն, ոչ, մանավանդ, տագնապ՝ դա ԿԱՐԳԻՆ մարդու սովորական պահվածք է, որովհետև այդ ԿԱՐԳԻՆ մարդը քննություն տվողի հոգեբանությամբ է մոտենում այդ օրվա ամե՛ն իրադարձության՝ դպրոցի մուտքին հավաքված աշակերտների միջով հպա՛րտ կեցվածքով անցելու, աջ ու ձախ ժպիտ պարգևելու և ժպիտներ ստանալու դժվարին քննությանը պատրաստ:

Իմ պատկերացումների մեջ հենց այսպիսի՛ն է ուսուցիչը, և ակնածանքը նրա հանդեպ գալիս է իր անցած տարիների վաստակի՛ հանգույն:

Տա Աստված, որ նրանք աշխարհին բաժանած իրենց բարությանը ԿԱՐՈՏ ՉՄՆԱՆ:

...Շնորհավոր իմ ծանոթ, իմ ընկեր բոլոր, բոլոր ուսուցիչներին: Եւ՝ կարոտս մեր գյուղի դպրոցի ուսուցիչներին այս հողի վրա ու... Երկնքում:

Հովհաննես Պապիկյան
ՀՊՄՀ շրջանավարտ

ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉ

Նվիրում եմ ուսուցիչներին
Ես վաղուց ալեհեր եմ դարձել,
Բայց էլի մանուկ եմ դեռ քեզ մոտ,
Եվ ինչքան տարիներ եմ մաշել,
Ու կրկին շիկնում եմ ես քեզ մոտ:
Տառերդ բանալի են դարձել,
Բացում եմ դռները հավակնոտ,
Ես էլի նույնն եմ մնացել,
Եվ սիրտս թռչում է քեզ մոտ:
Գալիս եմ, թռչում եմ ես քեզ մոտ,
Շոյանքիդ շատ-շատ եմ կարոտել,
Առաջին ուսուցիչ՝ երկնամոտ,
Ճախրանքի թևեր ես նվիրել:

Վրեժ Սարուխանյան
ՀՊՄՀ շրջանավարտ

Ուսուցչուհուս

Բարի առավոտ, իմ լավ, իմ անգին...
Նամակ եմ գրում այս էլ երևի մեկ միլիոն անգամ
Ու չեմ ուղարկում ինչ-ինչ պատճառով.
Տառերն այն չեն, մտքերն այն չեն
Եվ, ընդհանրապես, նամակն էլ այն չէ,
ինչ ես կուզեի...
Գիտե՞ք, ուսուցիչ,
Դեռ Ձեր անունը լրիվ չգրած՝
Թուղթս հեղվում է գարնան արևով,
Աչքերիս առաջ տողը փոխվում է
ծնհալի գինով բուրող ակոսի,
Որի պռնկին ոչ այս և ոչ այն՝
ծնծաղիկները հյուսում են տառեր՝
Այբ...
Բեն...
Գիմ... Դա...
Հետո, ուսուցիչ,
Անցած մանկության հուշերիս ձորը
Լցվում է առվի մեղմիկ կարկաչով,
Ու սարալանջի մանուշակների
կապույտ շուրթերից
իր տոտիկներին նեկտար է բառնում
լուսաբացի մեջ թաթախված մեղուն...
Այդ մեղուն ես եմ:
Ես, որ տեսիլքի և կամ հրաշքի չեմ էլ հավատում,
Դեռ Ձեր անունը լրիվ չգրած՝
Անձս գտնում եմ Ծիր-Կաթնի աստղոտ
խաչմերուկներում:

Դուք հայտնվում եք ուղեցույցի պես,
Կանաչ լույս վառում հայացքով ջերմիկ,
Ու ես գնում եմ՝ մոլորակների երգը բերելու,
Որ զարմանալի վերնագիր ունի.
«Այբ, բեն, գիմ, դա...»:
Ես իմ գոյությամբ պարտական եմ Ձեզ,
Իմ լավ, իմ անգին...
Եվ որովհետև այդ պարտքի չափը
չեմ կարող գրել և ոչ մի թվով,
Եվ որովհետև չի էլ հաջողվի որոշել գինը
Լեզու տվողի,
Ուստի նամակ եմ գրում հիմա Ձեզ
այս էլ երևի մեկ միլիոն անգամ,
Եվ այդ նամակը դպրոց գնացող որդուս տետրի մեջ
նույն հրաշագործ սկիզբը ունի...
Այբ...Բեն...Գիմ... Դա...

Ֆելիքս Պետրոսյան
ՀՊՄՀ շրջանավարտ

ԵՐԲ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ Է

Մանկավարժական համալսարանում էր Ինդոնեզիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Սերոբ Բեջանյանը: Դասախոսների և ուսանողների հետ հանդիպմանը նա ներկայացրեց երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների առանձնահատկությունները: «Հեռավորությունից դեպի գործընկերություն» խորագրի ներքո կողմերը կանխորոշեցին առաջիկա համագործակցության հեռանկարները և ուղղությունները կրթության ասպարեզում:

ՀՊՄՀ ռեկտոր Լիլիթ Մկրտչյանը կարևորեց կրթության և գիտության դերը որպես հիմնական կրթական միջավայր ապահովող համալսարան, ապա ներկայացրեց դեսպանին, որն իր աշխատանքային 30-ամյա գործունեության ընթացքում անդադար կրթվել է միջազգային տարբեր կրթական կառույցներում:

Սերոբ Բեջանյանը ծնունդով Էջմիածին քաղաքից է, ավարտել է ԵՊՀ այն ժամանակ Պատմության ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժինը, աշխատել է Լեռնային Ղարաբաղում, Հունաստանում, այլ երկրներում՝ կուտակելով դիվանագիտական աշխատանքի փորձառություն: Ավելի քան 6 տարի նա աշխատել է Լեռնային Ղարաբաղի արտգործնախարարությունում, գործուղումներ Հունաստան, Բրյուսել փոխդեսպանի կարգավիճակով, 2022 թվականից Հայաստանը ներկայացնում է Ինդոնեզիայի Հանրապետությունում, Սինգապուրի Հանրապետությունում, Մալազիայում և մի շարք այլ երկրներում, ASEAN միջազգային կառույցում:

«Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը ահռելի մեծ տարածաշրջան է, դեռևս մեզ համար թերուսումնասիրված, բայց շատ մեծ պոտենցիալով ու մեծ խնդիրներով տարածաշրջան է»,-ասաց դեսպանը՝ փորձելով ներկաների համար բացահայտել Ինդոնեզիան: Նա ներկայացրեց՝ Հայաստանին և Ինդոնեզիային՝ աշխարհագրորեն իրարից այդքան հեռու երկրներին կարող են կապել կրթությունը, գիտությունը, մշակույթը և մարդիկ:

Նա թվային վիճակագրությամբ ներկայացրեց 3 մլն բնակչություն ունեցող Ինդոնեզիան, որն ունի 17 կղզի, G20-ի անդամ է, ASEAN-ի առանցքային պետություն է, խաղաղօվկիանոսյան երկրների միության մեջ է, ինչպես նաև աշխարհի ամենամեծ մահմեդական բնակչություն ունեցող երկիրն է, որ այդ փաստը սկզբում վախեցրել է իրեն, իսկ հետո հանդիպել է այլ իրականության:

Դեսպանն անդրադարձ արեց երկրի պետական կառուցվածքին, որի հիմքում նկատելի է բյուրոկրատիան, նաև ընդգծեց, որ կրթական համակարգի մեջ մի քանի նախարարություններ են աշխատում:

Հանգամանորեն ներկայացնելով՝ ինչն է կապում Հայաստանին և Ինդոնեզիային՝ նա ասաց, որ 4 տարի է անցել, ինչ Ինդոնեզիայի Հանրապետությունում է, բայց տարածաշրջանը դեռ ուսումնասիրում է: Անընդհատ հրավերներ դպրոցներից և համալսարաններից. տարին մեկ անգամ մեկ դպրոց է այցելում, որտեղ հրաշալի ներկայացնում են Հայաստանը, հետաքրքրվում Հայաստանով, հյուրասիրում հայաստանյան խոհանոցին հատուկ ուտեստներով:



Ինդոնեզիայում կա 4600 բաձրագույն ուսումնական հաստատություն, որից 2800-ը համալսարան է, դրանցից 5-6 տոկոսն է պետական, թեև մասնավորները մեծ հեղինակությամբ համալսարաններ են: Երիտասարդները սիրում են սովորել:

Ինդոնեզերենը մալայեների փոփոխված տարբերակն է, ժամանակներ առաջ երկիրը եղել է հոլանդական գաղութ և մինչև այսօր հոլանդական ազդեցությունը կա:

Խոսելով երկրի բազմազանության և միասնության մասին՝ դեսպանն ընդգծեց, որ երկրի հիմնական կրոնը հնդուիզմն է, իսկ քրիստոնյաները կազմում են 10 % (30 մլն), որի մեջ են մտնում նաև կաթոլիկներն ու բողոքականները:

Հին մշակութային ժառանգություն, ուժեղ ազգային ինքնություն, ընտանիքի և համայնքի կարևորություն, կրթության նկատմամբ բարձր հարգանք, պատմական

մարտահրավերների հաղթահարման փորձ. դեսպանը հանգամանորեն ներկայացրեց ընդհանությունները, որոնց հիմքի վրա էլ շարունակում են կառուցել դիվանագիտական հարաբերությունները, որոնք 34 տարվա պատմություն ունեն՝ ձևավորվելով 1992 թվականից:

ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ դեսպանը խոսեց մինչև 50-ական թվականները գոյություն ունեցած հայ համայնքի ու հայկական հետքի մասին՝ դպրոց, եկեղեցի, թերթ, նաև ընդգծելով, որ այսօր մշտական բնակվող հայեր չկան:

Խաղաղ օվկիանոսյան երկրների ասոցացիայի մեջ մտնում է 11 երկիր, այն իր կառույցով նման է Եվրոմիությանը, միավորում է շուրջ 700 մլն բնակչություն ունեցող տարածաշրջան, որի մեջ են Սինգապուրը, Մալազիան, Թաիլանդը, Լաոսը, Կոմբոջան և այլ երկրներ:

Ինչ կարող է Հայաստանն առաջարկել Ինդոնեզիային՝ ԱԲ բարձր տեխնոլոգիաներ, Թումոյի կրթական մոդել, շախմատը՝ որպես կրթական գործիք և այլն:

Դեսպանը խոսեց նաև Սիգապուրի զարգացող տնտեսության, կառավարման ավտորիտար ռեժիմի և չինական համայնքի կողմից տնտեսության ղեկավարման մասին, որի արդյունքում երկիրը նման առաջընթաց է ունեցել:

ՀՊՄՀ ռեկտոր Լիլիթ Մկրտչյանը համառոտ ներկայացրեց Մանկավարժական համալսարանի մասնագիտությունները՝ հայ-ինդոնեզական համալսարանական կամրջի ներքո ուրվագծելով համագործակցության հնարավոր ուղղություններն ըստ բուհի մի շարք մասնագիտությունների՝ շեշտը դնելով գիտակրթական բաղադրիչի, արվեստի ոլորտի և «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի հետ նոր կապերի ստեղծման վրա:

Ներկաները հարցեր ուղղեցին դեսպանին, հանդիպումն ամփոփվեց այն հստակ միտումով, որ հեռավորությունը քարտեզի վրա է, և որ ներկա հանդիպումը կարող է դառնալ կապերի առաջին քայլը:

Սիլվա Ասրյան

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԵՌՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Մկրտչյանը մասնակցեց «Armeno-Georgica. Հայ-վրացական պատմամշակութային առնչություններ. հնագույն ժամանակներից մինչև նոր շրջան» միջազգային կոնգրեսի բացման պաշտոնական արարողությանը: Հայ-վրացական պատմական ու մշակութային փոխազդեցությունների համապարփակ ուսումնասիրությանը նվիրված եռօրյա գիտաժողովը կազմակերպել են «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամն ու Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանը:

Բացման խոսքով հանդես է եկավ ՀՀ ԿԳՄՍ նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը: Ողջունելով հյուրերին և Կոնգրեսի մասնակիցներին՝ նա նշեց, որ Գիտության կոմիտեի ջանքերով Շոթա Ռուսթավելիի անվան Վրաստանի ազգային գիտական հիմնադրամի հետ հայ-վրացական միջպետական գիտական համագործակցությանը սկիզբ է դրվել դեռևս 2022 թվականից, և որ, նշված ժամանակահատվածից ի վեր, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Շոթա Ռուսթավելու անվան հիմնադրամի համաֆինանսավորմամբ աջակցություն են ստացել և իրագործվել տասնյակից ավելի համատեղ ծրագրեր: «Armeno-Georgic. Հայ-վրացական պատմամշակութային առնչություններ. հնագույն ժամանակներից մինչև նոր շրջան» միջազգային կոնգրեսն այդ համագործակցության արտահայտումներից մեկն է»,- իր խոսքում նշեց Սարգիս Հայոցյանը:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն, դոցենտ Ռոբերտ Ղազարյանը, Հիմնադրամի անունից ողջունելով Կոնգրեսի մասնակիցներին, նշեց, որ նման մասշտաբների հայ-վրացական համատեղ միջոցառում Երևանում կազմակերպվում է առաջին անգամ:

«Չնայած և՛ Վրաստանում, և՛ Հայաստանում հայագիտության և վրացագիտության ոլորտներում հսկայական գործ է կատարվել, սակայն ներկայիս աշխարհում զգալիորեն ավելացել են նաև հակագիտական դրսևորումներն այս ոլորտներում, ուստի այդ հարցերի քննարկումը, վերհանումը օգտակար կլինի պատմական իրադարձությունների օբյեկտիվ գնահատման և գիտական համագործակցության էլ ավելի խորացման առումով»,- ընդգծեց Ռոբերտ Ղազարյանը:

«Գեղարդ» հիմնադրամի վերլուծաբան Գոռ Մարգարյանն էլ նկատեց, որ պատմագիտական հարցերի քննությամբ այս գիտաժողովը նպատակ ունի իր ավանդը բերելու հայագիտության, վրացագիտության, կովկասագիտության ու հարակից գիտությունների մեջ:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես եկան Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, ՀՀ Արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարության Սահմանակից երկրների վարչության Վրաստանի բաժնի պետ Սասուն Հովհաննիսյանը, ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի Հայրենադարձների ինտեգրման վարչության պետ Հովհաննես Ալեքսանյանը, Իվանե Ջավախիշվիլու անվան Պատմության և ազգաբանության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Գիորգի Ճեիշվիլին: Ընթերցվեցին ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Պավել Ավետիսյանի և Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ջաբա Սամուշիայի ուղերձները:

Կոնգրեսին մասնակցում էր ավելի քան 90 գիտնական Հայաստանից, Վրաստանից, Լեհաստանից, Ռուսաստանից, Ճապոնիայից, Մեծ Բրիտանիայից, Ուկրաինայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Չեխիայից, Բուլղարիայից:

Մանկավարժականի երևելիները. ԱԼԲԵՐՏ ՅԱՎՈՒՐՅԱՆ

Ալբերտ Գառնիկի Յավուրյանը ծնվել է 1935 թվականի օգոստոսի 26-ին, Գյումրիում (Լենինական), հայ կինոօպերատոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ:

1964 թվականին ավարտել է Մոսկվայի համամիութենական կինոինստիտուտի (ՎԳԻԿ) օպերատորական ֆակուլտետը (Լ.Կոսմատովի արվեստանոց): Առաջին ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները կատարել է Յալթայի կինոստուդիայում, որտեղ կինոուսումն ավարտելուց հետո ստացել է նշանակում:

Ալբերտ Յավուրյանը օգոստոսի 26-ին կդառնար 91 տարեկան:

ՀԱՄԱԿՐԱՆՔԻ ՈՒ ՍԻՐՈ ՄԻՋՈՎ

«Ես շնորհակալ եմ ճակատագրից այն բերկրալի պահերի համար, որ ճաշակել եմ կյանքում...». տարիների վաղեմություն ունեցող այս տողերը, գրված Ալբերտ Յավուրյանի կողմից, կարծես մի լուսավոր թախիծով վերակենդանացնում են նրան... Ժամանակը չի խնայում նաև տաղանդավորներին: Իսկ նա՝ այնպես հաշտ ժամանակի ու ճակատագրի հետ: Աշխարհում նրա աշխարհը կինոն էր, իսկ մեզ մնաց կինոյի գեղեցիկ ու զարմանահրաշ ժամանակների լեգենդը:

Գիտեի, որ ծանր հիվանդ է: Զանգահարեցի և ասացի, որ ուզում եմ հարցազրույց վերցնել: Հարցազրույցի սիրտ ու տրամադրություն չուներ, բայց ասաց. «Սիլվա ջան, քեզ չեմ կարող մերժել, մեր տուն պիտի գաս, որովհետև շատ վատ եմ և աշխատանքի չեմ կարողանում գնալ»: Պայմանավորվեցի... ու չգնացի: Չէի կարող իր շուրջը մշտապես բարություն և լույս սփռող այդ զարմանահրաշ մարդուն տեսնել ժամանակի առաջ այդպես խեղճացած, և հուզմունքս թաքցնել:

Շատ ժամանակ չէր անցել այն օրից, երբ նշում էինք նրա աշխատանքային կեսդարյա գործունեությունը և ծննդյան 70-ամյակը...

Հայ կինոյի տաղանդաշատ ներկայացուցչի, նրբաճաշակ ու խստապահանջ արվեստագետի և հրաշալի մանկավարժի մասին հնչեցին գնահատանքի գեղեցիկ խոսքեր: Իսկ նա, ինչպես միշտ, զարմանակի անկրկնելի և կաղապարներից դուրս. «Ես գաղթական չեմ և երբեք գաղթական չեմ դառնա, ես պետք է ապրեմ նախապապերիս երկրում՝ Հայաստանում: Եվ մի երազանք ունեմ. 100 տարվա վաղեմություն ունեցող այս կարպետը 100 տարի հետո էլ լինի Հայաստանում»:

Դիպլոմային աշխատանքի՝ «Մեկ փողոցով քաղաք» ֆիլմի գերազանց պաշտպանությունից մինչև «Հայֆիլմ» կինոստուդիա և դեպի մեծ կինո նրա ճանապարհն անցավ կինոարվեստի լավագույն գնահատողների, արվեստասեր հասարակության համակրանքի ու սիրո միջով: Կինոբեմադրիչի և օպերատորի նրա վառ անհատականության դրսևորման արդյունքում ծնվեցին դասական հնչեղության ֆիլմեր՝ «Բարև, ես եմ», «Երևանյան օրերի խրոնիկա», «Երկունք», «Ապրեցեք երկար», «Մենավոր ընկուզենին», «Երջանկության մեխանիկան», «Օտար խաղեր», «Հրդեհ»: Կինոաստղաբույլի մեծերի՝ Միհր Մկրտչյանի, Սոս Սարգսյանի, Ֆրունզե Դովլաթյանի և մյուսների հետ նրա շփումները անգնահատելի հետագիծ թողեցին, իսկ մեծն Փարաջանովի հետ հանդիպումը և «Աշուղ Ղարիբ» ֆիլմը դարձան նրա աստեղային ժամը:

Կինեմատոգրաֆիայի հոգին կինոօպերատորն է, այն եզակի մասնագիտության տեր մարդը, առանց որի կինոն պարզապես գոյություն չունի: Օպերատորությունը մեծ արվեստ է, և այդ արվեստին մեծապես գույն ու հմայք էր տալիս իր ժամանակի ֆենոմենը՝ Ալբերտ Յավուրյանը: 40 տարվա ընթացքում նկարել է շուրջ 30 ֆիլմ, որոնք հայ կինոյի մեծագույն նվաճումն են: Տարիները չեն խամրեցրել այդ ֆիլմերի փառքը: Թեև անվանի կինոօպերատորը երբեք փառքի չի ձգտել: Նրանը հոգու մեծ սերն էր կինոաշխարհի մեծերի և կինոարվեստի հանդեպ. «Կինոօպերատորությունը մեծ արվեստ է»,-ասում էր նա: Հենց այդ սերն էլ օգնեց նրան գտնել այն բանալին, որն առանց բախելու դռներ էր բացում: Այդ սերը նրան բերեց բազմաթիվ պարգևներ, մրցանակներ ու կոչումներ, այդ թվում՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՍՍՀ ժողովրդական արտիստ, «Մովսես Խորենացի» մեդալ, ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության «Նիկա» մասնագիտական մրցանակ, ՀԽՍՀ երկու պետական մրցանակ «Բարև, ես եմ», «Երջանկության մեխանիկան» ֆիլմերի համար, «Ոսկե ծիրան» հատուկ մրցանակ, «Ադամանդակուռ Արարատ» շքանշան (Թեքեյան մշակութային կենտրոն)... բազմաթիվ այլ պարգևներ ու շքանշաններ, բայց ամենակարևորը հասարակության սերն ու համակրանքն էր: Մարդկային մի ամբողջ կյանք մի մարդու, որի մտքի ու երևակայության թռիչքի ելակետը աշխարհընկալման անընդգրկելի փիլիսոփայությունն էր, մաքուր ու պայծառ հավատը մարդկային ճակատագրի հանդեպ, և պարզ ու անխառն խառնվածքը ժամանակների վայրիվերումների հարահոս ընթացքի մեջ:

Նրա շփումը ուսանողների հետ դժվար էր տեղավորել մերօրյա դասախոս-ուսանող կաղապարի մեջ, բառիս ամենալայն իմաստով՝ նա մեծ մանկավարժ էր, ումից ուսանողները, նրա հետ շփվող մարդիկ կյանքի և իմաստության դասեր էին առնում:

Մինչև կյանքի վերջին օրերը (նույնիսկ ծանր վիրահատությունից հետո) նա Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Կինոյի և հեռուստատեսության ամբիոնի իր արվեստանոցում էր, ուր ամեն զրույց պտտվում էր կինոյի խնդիրների շուրջ...

Նրա ամեն մի խոսքը, ինչպես Թումանյանը կասեր, «մի աշխարհ էր», որ արդեն իսկ թևավոր խոսք է դարձել. «Պետք է մտածել հնարավորությունների սահմանների մասին», «Մենք պետք է պատասխանատվություն կրենք մեր կենսագրության համար», «Մենք ունենք մի խնդիր՝ մարդու բովանդակության խնդիրը», «Բարոյականությունը պետք է լինի մեր չափանիշը»...

Նրա հմայքն առանձնահատուկ էր, նա մշտապես ասելիք ունեցող պատկառելի հեղինակություն էր:

Հիմա արդեն Ալբերտ Յավուրյանի աստղը երկնքում ինչ-որ տեղ լույս ու բարություն է սփռում: Կինոարվեստի մեծ նվիրյալի ու անհատականության դասերը սերունդները դեռ կըմբոշխնեն, և յուրաքանչյուր ոք կարող է խոնարհվել այդ մաքուր ու պայծառ մեծության հիշատակի առաջ՝ խորհելով ժամանակի ու տարածության սահմանների մասին...

Սիլվա Ասրյան
«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» պաշտոնաթերթ, թիվ 8(866), Նոյեմբեր, 2007թ.

ՀԻՇԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ. ԱՐԿԱԴԻ ՇԵԿՈՒՆՑ

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները խորապես ցավում են Արկադի Շեկունցի մահվան առթիվ, վստահ, որ մանկավարժ գիտնականի ու մշակութային գործչի թողած ժառանգությունը սերունդներին դեռ երկար կուղեկցի:

Արկադի Շեկունց. նրան Մանկավարժական համալսարում ասում էին Արկադի Արամիչ, մարդ, որ իր բաժին կյանքն ապրեց սերունդներ կրթելով, ավելի ճիշտ՝ երիտասարդների մեջ կրթական մշակույթ ձևավորելով: Նա կրթության ու արվեստի ոչ սովորական նվիրյալ էր, անխոնջ մշակ, որի անցած ողջ ճանապարհը օրինակ է ապրողների համար:

Նա ծնվել է Գորիսում 1935 թվականին, երաժշտական կրթություն ստացել Պոլտավայի երաժշտական ուսումնարանում, այնուհետև ուսումը շարունակել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

1967 թվականից նրա մասնագիտական գործունեությունը անխզելիորեն կապված է Մանկավարժական համալսարանի հետ, որտեղ սկզբում աշխատեց որպես Գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետի դեկան, ապա՝ ՀՊՄՀ Մշակույթի կենտրոնի տնօրեն: Նա առանձնանում էր մտավորականի ու արվեստագետի, բարեկիրթ ղեկավարի ու դասախոսի յուրահատուկ կեցվածքով: Անսպառ էներգիայով աչքի ընկնող Արկադի Արամիչն իր ձեռագիրը թողեց բարձրագույն ուսումնական հաստատությունում, ուր պրոֆեսորից մինչև ՀՀ վաստակավոր գործիչ ընկած ճանապարհը անցավ մարդկայինին ու մարդկային արժեքներին դավանելու միջով, որով առաջնորդվում էր յուրաքանչյուր նախաձեռնություն իրականացնելիս:

2006 թվականին՝ բուհի հիմնադրման 85-ամյակի նախօրեին, նրա նախաձեռնությամբ ստեղծվեց ուսանողական թատրոն-ստուդիան: Գեղարվեստական ղեկավար Արկադի Շեկունցը բեմադրող ռեժիսոր Հերբերտ Գասպարյանի հետ ձևավորեց մշակութային միջավայր՝ օգտագործելով տարբեր կուրսերի ուսանողների ստեղծագործական ներուժը՝ նրանց սովորեցնելով բեմի կախարդական աշխարհի գաղտնիքները, նաև բեմը նրանց համար դարձնելով ինքնաճանաչման յուրահատուկ դպրոց: Այսպես ծնվեցին բազմաթիվ բեմադրություններ՝ հայ և համաշխարհային դրամատուրգիայի հարուստ գանձարանից:

Արկադի Արամիչը տարիներ շարունակ Կրթության ազգային ինստիտուտի հետ համատեղ կազմակերպեց դպրոցական երգչախմբային արվեստի փառատոններ՝ վերականգնելով դպրոցական երգչախմբային ավանդույթները: Այդ մանկական երգչախմբային փառատոնները վերածվում էին մշակութային տոնի ու դառնում մեծ իրադարձություն՝ Երևանի տարբեր հրապարակներում միավորելով մարդկանց:

Նրա գիտական ու մասնագիտական հրապարակումների շարքում հատկապես կարելի է առանձնացնել խմբերգային պարտիտուրի վերլուծությանը և Ղարաբաղի անվանի հայ երաժիշտներին նվիրված աշխատությունները:

1963-1992 թվականներին Շեկունցը աշխատել է նաև Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեում՝ որպես երաժշտական հաղորդումների խմբագիր, ավագ խմբագիր, ապա՝ գլխավոր խմբագիր՝ թողնելով մասնագիտական հարուստ ժառանգություն:

Նրա առաքելությունն ու կոչումը մանկավարժությունն էր, որին նվիրվեց իր աշխատանքային կենսակերպով, աշխատաոճով ու կենսագրությամբ, ուր կենսագրական դիպվածներն ու թվերը մի հրաշալի պատում են մարդկային կյանքի մասին՝ իր տեսակի մեջ՝ գեղեցիկ ու անդառնալիորեն հարուստ: Արկադի Արամիչը իր ժամանակի լեգենդներից էր, որ պիտի անմահանա մանկավարժական սերունդների հիշողության մեջ:

Երիցս ճիշտ է ՀՊՄՀ շրջանավարտ, լրագրող Հրանտ Սարաֆյանը. «Նա այն մտավորականներից էր, որոնց ներկայությունը բարձրաձայնվելու կարիք չուներ: Շեկունցը չէր ձգտում լինել առաջին պլանում. նրա փոխարեն խոսում էին իր ստեղծած գործերը, իր կրթած սերունդները, իր ներդրած արժեքները: Նրա համար արվեստն ու մանկավարժությունը նույն առաքելության երկու կողմերն էին՝ մարդուն մոտեցնել ճշմարիտ մշակույթին»:

Սիլվա Ասրյան

Ազգայինը չպետք է դարձնենք հեթանոսական

Սիրով ներկայացնում եմ իմ հարցազրույցը ՀՀ վաստակավոր գործիչ, երաժիշտ, խմբավար, մանկավարժ, սցենարիստ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի նախկին դեկան, Մշակույթի կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Արկադի Արամի Շեկունցի հետ, որը ժամանակին աշխատել է մշակույթի ոլորտի հայ լեգենդների հետ...

-Արկադի Արամիչ, դժվար է հավատալ, որ Դուք 80 տարեկան եք: Թեև ձեր պատկառելի տարիքին՝ Դուք միջավայրին մշտապես ներկայանում եք որպես բարձր մտածողությամբ ու երիտասարդական ավյունով լեցուն, համեստ ու բարի, բարետես ու համակրելի արտաքինով մտավորական, որի հետ միշտ էլ հաճելի է համագործակցել, շփվել, զրուցել...

Ինչ զգացողություններով դիմավորեցիք հոբելյանը, որ լրացավ անցած տարվա վերջին օրը:

-Անկեղծ ասած, ինքս էլ չեմ հավատում, որ 80 տարեկան եմ: Բայց ես երջանիկ եմ, որ 80 տարեկան եմ. դժբախտաբար ոչ բոլորին է հաջողվում ապրել այդքան երկար և բովանդակալից: Ես երջանիկ եմ, որ ծնվել, մեծացել, սովորել և աշխատել եմ արվեստի միջավայրում, շփվել անվանի մարդկանց, կարելի է ասել լեգենդների հետ. նրանցից ես շատ բան եմ սովորել... Ես երջանիկ եմ, որ աշխատել եմ միայն երկու մեծ հիմնարկություններում՝ Հանրային հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում, որտեղ ստեղծագործական աշխատանքի մեծ հորիզոններ էր մշտապես բացվում, և, իհարկե, իմ շատ սիրելի Մանկավարժական համալսարանում, որտեղ աշխատում եմ շուրջ 50 տարի:

Հարցնում եք՝ ինչպե՞ս եմ դիմավորել հոբելյանս, դիմավորել եմ իմ շրջապատի ջերմությամբ: Երբ մարդիկ ինձ դիմավորում եմ ժպիտով՝ նրանք ինձ դրական լիցքեր են հաղորդում, որն ինձ ոգևորում է... Ես երջանիկ եմ նաև, որ երկար տարիներ աշխատել եմ Մանկավարժականի մի հրաշալի ֆակուլտետում...

-1965 թվականից աշխատել եք Մանկավարժական համալսարանում, ղեկավարել խմբավարման և ձայնադրման ամբիոնը, 1988-ից՝ Գեղարվեստական կրթության ֆակուլտետը: Դուք աշխատել եք 13 ռեկտորի հետ... Ձեզ ինչպե՞ս է հաջողվել շահել բոլորի վստահությունը...

-Ես երբևէ չեմ ձգտել հարկի-անհարկի մտնել ռեկտորի աշխատասենյակ, ես նրանց վստահությանն եմ արժանացել իմ գործունեությամբ: Բոլորն էլ ղեկավարման իրենց հետաքրքիր ոճն ունեին: Ես միաժամանակ աշխատում էի հեռուստատեսությունում, և նրանք ինձ հետ, որպես ոլորտին քաջատեղյակ մարդու, հաճախ էին խոսում արվեստի խնդիրների մասին: Ռեկտորներ կային, որոնք մեծապես գնահատում էին երաժշտական արվեստը:

-Ինչ կասեք Ձեր արմատների մասին:

-Ես Զանգեզուրից եմ, ծնվել եմ Տեղ գյուղում, ավարտել Գորիսի հմ. 1 միջնակարգ դպրոցը: 7-րդ դասարանից արդեն նվագում էի քաղաքի փողային նվագախմբում: Ինձ հետ պարապում էին մասնագետները, և ես աստիճանաբար կատարելագործվում էի... նույնիսկ մեկ-մեկ նվագում էի հարսանիքներում և փող վաստակում... Դեռ դպրոցական տարիներից աչքի էի ընկնում երաժշտական

ընդունակություններով, սակայն նպատակ չէի դրել երաժիշտ դառնալ:

Հորեղբայրս, որ շրջկոմի քարտուղար էր, իմ մեջ տեսնում էր ապագա ունեցող երիտասարդի և իմ կայացման համար բոլոր պայմաններն ստեղծում էր: Հենց նա էլ ինձ խորհուրդ տվեց դիմել բժշկական ինստիտուտ: Ես որոշել էի դառնալ անվանի վիրաբույժ, վիրահատություններ կատարել, բայց ամեն ինչ այլ կերպ ստացվեց… Իմ ստացած միավորներով ես կարող էի ստանալ թերապևտ բժշկի մասնագիտություն, ինչն էլ ինձ ետ պահեց բժիշկ դառնալու իմ մտադրությունից: Եվ ես մեկնեցի բանակ:

-Ծառայեցիք Ուկրաինայում, որը Ձեզ համար ճակատագրական եղավ…

-Ես իմ ճակատագրին շատ շնորհակալ եմ, որովհետև իմ ճանապարհին միշտ էլ լավ մարդիկ են հանդիպել: Ծառայել եմ Ուկրաինայում: Շտաբի պետը՝ Հովհաննես Գյուլբեկյանը, Ռոստովի հայ էր, շատ հետաքրքիր անձնավորություն: Երբ իմացավ, որ ես կլարնետ եմ նվագում, ինձ ընդգրկեց փողային նվագախմբում: Շաբաթ-կիրակի օրերին պարային երեկոներ էին կազմակերպվում զինվորականների համար, որտեղ մենք նվագում էինք: Ես արդեն նոտագրություններ էի անում: Ստեղծեցի մի փոքրիկ ջազբենդ: Երբ Հ. Գյուլբեկյանն իմացավ, որ ուզում եմ երաժշտական կրթություն ստանալ՝ առաջարկեց դիմել Պոլտավայի երաժշտական ուսումնարան: Ես գերազանց գնահատականներով քննություններ հանձնեցի և ծառայությանս զուգահեռ սովորեցի երաժշտական ուսումնարանում:

-Ինչո՞վ էր պայմանավորված Ձեր վերադարձը Երևան: Չէ՞ որ Դուք երկու նամակ ուղարկեցիք բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներին…

-Չորս տարի սովորելուց հետո ես երկու նամակ ուղարկեցի Լենինգրադի զինվորական երաժշտության ակադեմիայի և Երևանի պետական կոնսերվատորիայի ռեկտորներին, որպեսզի հետագա անելիքս որոշեմ: Մի ջերմ նամակ ստացա Երևանի պետական կոնսերվատորիայի ռեկտոր Գրիգոր Եղիազարյանից, որով ոչ միայն հրավիրում էր ինձ սովորելու Երևանի պետական կոնսերվատորիայում, հորդորում այլ երկիր չգնալ, վերադառնալ հայրենիք, այլև զանգեզուրցի հայ տղայիս առաջարկում էր իր օգնությունը: Ընդամենը 21 տարեկան տղայի համար սա ֆանտաստիկ էր, երբ ռեկտորը նամակ է գրում, հրավիրում, առաջարկում օգնել… Իսկ կոնսերվատորիան այն ժամանակ մեծ վարկանիշ ուներ: Ամբողջ գիշեր մտածեցի: Ես հասկացա՝ կարոտել էի զանգեզուրյան սարերը, կարոտել էի իմ հայրենի Զանգեզուրը, իմ տունը, ընտանիքը, հարազատներիս: Եվ որոշեցի վերադառնալ:

-Ովքե՞ր են Ձեզ դասավանդել կոնսերվատորիայում և կոնսերվատորիայի դերը Ձեր կյանքում:

-Բարձր գնահատականներով ընդունվեցի կոնսերվատորիա, ավարտեցի երկու՝ խմբավարական և փողային գործիքների բաժինները:

Ես երջանիկ եմ, որ սովորել եմ ժամանակին ոչ միայն Հայաստանի, այլև միութենական հանրապետությունների մեջ լավագույն երաժշտական հաստատությունում: Մենք ունեինք Թաթուլ Ալթունյան՝ տաղանդավոր մարդ և մեծ խմբավար, Միքայել Տերյան, Մելիք Վրթանեսյան, երաժշտության պատմության մասնագետ Մարգարիտա Հարությունյան, կոմպոզիտոր, Գայանե Չեբոտարյան, հարուստ գիտելիքների տեր, արտակարգ խստապահանջ դասախոս, ինչպես նաև Լիդիա Զունգուրյան՝ Լենինգրադից:

Էդվարդ Միրզոյանը և Արամ Սաթունցը ինձ ճանաչում էին զանգեզուրյան և ղարաբաղյան շրջագայություններից, նկատել էին իմ ակտիվությունը կոմերիտական աշխատանքներում և ինձ առաջարկեցին աշխատել հայկական հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում: Ես սիրով համաձայնեցի:

-Եվ սկսվեց Ձեր կենսագրության լավագույն էջը՝ աշխատանք Հայաստանի նոր-նոր կազմավորվող հեռուստատեսությունում…

-Այո, նորաստեղծ հեռուստատեսությունը կադրերի կարիք ուներ, և ինձ աշխատանքի վերցրին որպես երաժշտական ձևավորումների խմբագիր, ապա՝ ավագ, այնուհետև՝ գլխավոր խմբագիր:

Ինձ մոտ աշխատում էին ճանաչված մարդիկ՝ կոմպոզիտորներ Ալեքսանդր Աճեմյանը, Ադամ Խուդոյանը, Ստեփան Շաքարյանը, Էրիկ Հարությունյանը… Տաղանդավոր ու արդեն ճանաչված կոմպոզիտորներ էին այն ժամանակ, և ես նրանց բաժնի վարիչն էի… Հետաքրքիր հաղորդումներ ու ներկայացումներ էին ձևավորում: Մոսկվայից վերցրած ֆիլմերը թարգմանում էինք, բայց երաժշտությունը մերը պետք է լիներ… Աշխատանքը կատարում էինք պրոֆեսիոնալ մակարդակով: Ես հիմա թվարկում եմ անուններ և ցավով նկատում այն տարիների և այսօրվա հաղորդումների երաժշտական ձևավորումների տարբերությունը. մակարդակն այսօր խիստ ցածր է, չնայած բարձր տեխնոլոգիաների զարգացմանը…

-Հետագայում Ձեզ նշանակեցին երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագիր….

-Ահա այստեղ ի հայտ եկան իմ ստեղծագործական հնարավորությունները… Ես երջանիկ եմ նաև այն առումով, որ այն ժամանակվա հեռուստատեսությունը հոգևոր արժեքներին մեծ տեղ էր տալիս: Մենք ունեինք դասական, էստրադային, ժողովրդական, վոկալ երաժշտության ժամեր… Եվ ես իմ նպաստը բերեցի հայկական հեռուստատեսության կայացմանը: Իմ նպատակն էր դասական երաժշտությունը բերել «առաջին գիծ», հետ մղել արևելյան ադրբեջանական երաժշտությունը, ինչն իշխում էր այդ տարիներին. պետք էր կոտրել կարծրատիպերը և ժողովրդին ուղղորդել դեպի դասական արվեստը: Սա մեծ հեղաշրջում էր:

-Արկադի Արամիչ, կպատմե՞ք Լուսինե Զաքարյանի հետ կապված որևէ հուշ:

-Լուսինե Զաքարյանի հետ սովորել ենք նույն կուրսում, նրա ծննդյան օրվա կապակցությամբ գիրք էր լույս տեսել: Այդ օրը ինձ ելույթ տվեցին, և ես պատմեցի մի հետաքրքիր հուշ: Խորհրդային ժամանակներն էին, և Մոսկվան տարին մեկ անգամ մեզ մեկ ժամ եթեր էր տրամադրում: Մեր խումբը մեկնեց Մոսկվա, մեզ հետ էր Լուսինե Զաքարյանը, որը պիտի կատարեր Եկմալյանի ստեղծագործություններից: Այդ տարիներին, գիտեք, հոգևոր երգերի հանդեպ ինչպիսին էր վերաբերմունքը… Հարցրին՝ ի՞նչ երգ է, ասացինք, որ սիրո մասին է: Լուսինեն պարանոցին և ականջներին խաչեր էր կրում: Բարեբախտաբար երաժշտական հաղորդումների խմբագիրը հայ էր, և խնդրեցինք Լուսինեին թույլ տալ ելույթ ունենալ այդ խաչերով: Հիշում եմ՝ Կոստանտին Օրբելյանին թույլ տվեցին եթեր դուրս գալ միայն երկար մազերը «խուզելուց» հետո…

- Դուք բախտ եք ունեցել շփվել մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի հետ, վայելել նրա ընկերակցությունը: Մեծանուն ու ճանաչված մարդիկ էլ երբեմն օգնության ու զորակցության կարիք են ունենում… Կպատմե՞ք, թե ինչպես ռուս լրագրողներն աղավաղեցին հայ կոմպոզիտորի հետ անցկացրած հարցազրույցը…

-Արամ Խաչատրյանի հետ Մոսկվայում մի հանդիպման ժամանակ վերջինս ինձ պատմեց, թե ինչպես է ռուս լրագրողի՝ մամուլում ներկայացրած ապատեղեկատվության հիման վրա Բեյրութի «Ազդակ» թերթը բացասական հոդված հրապարակել, ըստ որի, իբր կրեմլյան հիվանդանոցում վիրահատվելուց հետո, Ա. Խաչատրյանը ռուս լրագրողին տված հարցազրույցում ասել է, թե ինքը ռուս կոմպոզիտոր է… Վիրավորված ու վշտացած կոմպոզիտորը խնդրեց, որ հաղորդում պատրաստենք և հերքենք այդ անհիմն մեղադրանքը: Նա մի նամակ տվեց ինձ, որտեղ խնդրում էր պաշտպանել իրեն այդ տհաճ պիտակից: Մենք, իհարկե, հաղորդումը պատրաստեցինք, պարզաբանեցինք փաստերը, իսկ վերջում բառացի մեջբերեցինք Ա. Խաչատրյանի նամակի վերջին տողերը. «Ես շնորհակալ եմ ռուս ժողովրդին, որտեղ սովորել եմ, ապրել, ստեղծագործել… Իմ ուսուցիչները եղել են ռուսներ, բայց ես միշտ եղել եմ, կամ և կլինեմ հայ ժողովրդի զավակը և հպարտանում եմ դրանով, իսկ ազգայինից հրաժարվելը դավաճանություն է: Հուսով եմ, հավատում եմ, խորապես շնորհակալ եմ… 20.07.1973 թվական, Արամ Խաչատրյան»:

Հետագայում կոմպոզիտորի 5 էջանոց նամակը տեղ գտավ նրա մասին գրված իմ հուշերում:

Իսկ լավագույն հուշերն ինձ տանում են դեպի Հայաստանում Արամ Խաչատրյանի ծննդյան հոբելյանի առթիվ մեր կազմակերպած արվեստի տասնօրյակը, Վեհարանում նրա հանդիպումը Վազգեն Առաջինի հետ, Ռոստրոպովիչի այցը Հայաստան…

-Հայտնի է, որ ժամանակին Դուք աշխատել եք շատ ճանաչված ու հանրության կողմից սիրված արվեստագետների հետ…

-Այո, նրանցից մեկն էլ Ալեքսեյ Հեքիմյանն էր, ում «բացահայտելը» Մոսկվայում մեզ համար հայտնություն էր…

Աշխատանքային այցով Մոսկվայում էինք Հեռուստատեսության և ռադիոյի պետկոմի նախագահ Ստեփան Պողոսյանի հետ, երբ հանդիպեցի մի հայ գեներալի, որն ասաց, որ երգեր է գրում, և մեզ հրավիրեց իր տուն: Կինը ռուս էր, բայց ընտանեկան մթնոլորտը տիպիկ հայկական էր: Հեքիմյանը երաժշտական կրթություն չուներ, բայց մեզ այնքան դուր եկան նրա ստեղծագործությունները, որ նրան հրավիրեցինք Հայաստան, ուր նրա՝ դասական բանաստեղծությունների հիման վրա գրված ստեղծագործությունները սիրվեցին և գնահատվեցին հայ հանրության կողմից: Այդ երգերը մինչև այսօր էլ հարստացնում են հայ երգարվեստի գանձարանը…

Իսկ իմ շփումները մեծանուն արվեստագետների հետ, ոչ միայն երգարվեստի բնագավառում, շատ է եղել, բոլորին հնարավոր չէ ներկայացնել մեկ հարցազրույցում…

-Ձեր կենսագրության էջերն այնքան հարուստ են ու հագեցած. դժվարանում եմ և չգիտեմ որի մասին հարցնեմ…

-Եթե համառոտ ներկայացնեմ՝ պետք է ասեմ, որ 100 թատերական ներկայացումների երաժշտական ձևավորումներ եմ արել ոչ միայն հեռուստատեսային, այլև Երևանի ու տարբեր մարզերի թատրոններում, Մանկավարժական համալսարանում դասախոսական աշխատանքի տարիներին բազմաթիվ ձեռնարկներ ու հոդվածներ գրեցի խմբերգային տեսության արվեստի մասին, ստեղծեցի մասնագիտական գրքեր, որոնցով այսօր մասնագետները դասավանդում են տարբեր բուհերում:

-Մարդու Ձեր տեսակը նախանձելի է, Դուք մտավորականի դասական կերպար եք և հազվադեպ հանդիպող… Ո՞րն է Ձեր հաջողության գաղտնիքը…

-Իմ հաջողության գրավականը անմնացորդ աշխատելն է և ազնվությունը: Գիշեր-ցերեկ աշխատել եմ… Նաև շիտակությունը, հոգատար լինելը մարդկանց նկատմամբ, կոնֆլիկտներ չստեղծելը, լավատեսությունը… Պետք է լինել խաղաղ, համբերատար, բարեհամբույր… Եվ մշտապես պայքարել եմ արդարության համար, ոչնչից չեմ երկնչել… Նաև միշտ ձգտել եմ ինձնից մեծերի հետ ընկերություն անել: Մեծ արվեստագետների հետ ընկերությունը ինձ համար ուղենիշ է եղել… Հասուն տարիքում արդեն աշխատել եմ նրանց սխալները չկրկնել…

-Իսկ երբևէ սխալվե՞լ եք:

-Սխալվել չէի ասի, բայց երբեմն սայթաքել եմ…Ոչ ոք ապահովագրված չէ դրանից..

-Կարելի է ասել՝ ժամանակի հետ Դուք միշտ հաշտ եք…

-Իմ սերնդի մարդիկ դժվար են համակերպվում նոր ժամանակների և նոր մտածողության հետ… Այդ առումով ես ոչ մի խնդիր չունեմ: Բոլորի հետ ես կարողանում եմ աշխատել, լեզու գտնել… Մերօրյա երիտասարդ երգիչ-երգչուհիների հետ լավ հարաբերություններ ունեմ և ծննդյանս օրը շնորհավորական շատ զանգեր ստացա նրանցից… Ես ժամանակի շունչը զգում եմ, և դա ինձ երիտասարդացնում է…

-Սերը Ձեր կյանքում… Դուք երջանի՞կ մարդ եք…

-Այո՛, շատ երջանիկ: Հեռուստառադիոյի պետական կոմիտեում աշխատելու տարիներին մտերմացա Քնարիկ Սարգսյանի հետ, որը նույն հիմնարկությունում էր աշխատում և ռուսական հաղորդումների խմբագիրն էր, և արդեն 53 տարի միասին ենք անցնում մեզ բաժին ընկած ճանապարհը… Ունեմ 2 զավակ, 4 թոռ, 3 ծոռ…

-Ինչպիսի՞ն է արվեստի վիճակը այսօրվա Հայաստանում:

-Այն, ինչ տեղի է ունենում Հայաստանում վերջին ութ տարիների ընթացքում՝ ինձ ուրախացնում է. Անկախության ձեռքբերումն է դա… միջազգային մեծ նվագախմբեր են գալիս Հայաստան, հայտնի դիրիժորներ… Ես մեծ հպարտություն եմ ապրում: Մենք լավ խմբերգային արվեստ ունենք, սիմֆոնիկ նվագախումբ: Իսկ ընդհանուր առմամբ, ցավոք, այսօր անճաշակությունն է տիրում հայ երգարվեստում և թատերական արվեստում, անճաշակությունը նկատելի է նաև պարարվեստում: Հասկացանք՝ ազգային, բայց ազգայինը չպետք է դարձնենք հեթանոսական…

-Ի՞նչ եք կարծում, մեզ հոգևոր հեղաշրջում պե՞տք է այսօր…

-Հայ ժողովուրդը տաղանդավոր ժողովուրդ է, ինչո՞ւ պետք է տաղանդավորները հեռանան հայրենիքից: Ես սա ցավով եմ ասում: Բայց նկատելի դրական տեղաշարժեր կան, և ես հույսս երբեք չեմ կորցնում:

-Ի՞նչ պետք է անել, որ վերջապես հայ մարդը բարեկեցիկ ապրի, նորից հավատա…

-Մեծ ցավ եմ ապրում, որ մեր ժողովրդի մի զգալի մասը աղքատության մեջ է: Բարերարների գործունեությունը որոշ վերքեր է բուժում, բայց իշխանությունները պետք է վերանայեն իրենց մոտեցումները ժողովրդի հանդեպ, մեր ժողովուրդն արժանի չի չինովնիկների արհամարհանքին… Եթե չես կարողանում օգնել, գոնե չպետք է վիրավորես…

-Ո՞րն է մեր ազգի ամենավատ գիծը:

-Դավաճանությունը:

-Իսկ ամենալա՞վ գիծը…

-Հոգևոր արժեքների պահպանումը: Բոլոր ժամանակներում մեր ազգը գոյատևել է իր հոգևոր արժեքների շնորհիվ: Այսօրվա երիտասարդությանը պետք է դաստիարակել այդ արժեքներով, որովհետև, կարծում եմ, միայն այդ արժեքները կփրկեն սերունդներին…

-Ի՞նչ կմաղթեիք մեր մանկավարժներին:

-Մեր մանկավարժները հերոսներ են…Երբ մարդ ապահովված չէ, նա չի կարող լավ աշխատել: Նրանց բարեկեցություն է պետք…Ես նրանց հետ շատ եմ շփվում, ինքս էլ մանկավարժների ընտանիքից եմ, ինչպե՞ս կարող եմ անտարբեր լինել կոնսերվատորիայի այն դասախոսի կամ ուսուցչի հանդեպ, որը 50 հազար դրամ է ստանում: Բայց ես դեմ եմ հեղափոխություններին: Դրանք ոչ մի լավ բան չեն բերում:

Հարցազրույցը Սիլվա Ասրյանի, 2016 թ.

Ալիսա Դոլուխանյան

ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՄՈՏ ԳՏՆՎՈՂ ՓՈՔՐ ԿՂԶԻՆ, ՄԵՐԼԻՆ ՄՈՆՐՈՆ ԵՎ ԲՈՍՏՈՆԻ ՓՂԵՐԸ

Նյու Յորքին շատ մոտիկ՝ Ատլանտյան օվկիանոսում, ստեղծել են արհեստական փոքրիկ կղզի, որը Նյու Յորքի տեսարժան վայրերից է: Դա նախկին նավահանգիստ է եղել, ուր իջել են նաև Տիտանիկ նավի կործանումից փրկված մարդիկ:

Արհեստական կղզին կանգնած է վարդակակաչի ձև ունեցող (tulip) 132 ցեմենտ-բետոնե սյուների վրա և կոչվում է նաև Նյու Յորքի Հադսոն գետի զբոսայգի: Նրան շատ մոտիկ՝ ցամաքի վրա, կառուցված է Նյու Յորքի Skyline-ը, ուր օդով սլացող նախկին գնացքի երկար տարածքը վերածել են գեղատեսիլ այգու:

Փոքր կղզին բացվել է 2021 թվականի մայիսին, մուտքն ազատ է, և կղզի տանում են երկու լայն կամուրջներ. կղզու տարածությունը 2.4 ակր է:

Կղզին ստեղծել են բլրաձև, հարմար թեք ճանապարհներով և տեղ-տեղ դրված փայտե նստարաններով: Կղզին ունի նաև ամֆիթատրոն՝ 687 տեղանոց:

Կղզին գեղագիտական հաճույք է պատճառում իր խիտ կանաչապատումով: 400 տեսակի ծառեր և թփեր զարդարում են կղզին, որոնք ծաղկում են տարբեր եղանակների ժամանակ: Ամռան վերջին ամսին կղզին տարատեսակ գույների ծաղկունքի մեջ է:

Ի տարբերություն Նյու Յորքի ոչ մաքուր փողոցների և ոչ թարմ օդի, կղզին կատարելապես մաքուր է, և օդը հաճելի: Մեծ հաճույք է պտտվել կղզու տարբեր մասերում և դիտել Նյու Յորքն ու Ատլանտյան օվկիանոսը տարբեր դիրքերից:

Կղզու ներքևի՝ հարթ մասում, կա հրապարակ, որում գտնվում է սրճարան: Մարդիկ կարող են ուտելիքներ գնել: Կղզի մտնելը ձրի է, սակայն սրճարանը՝ թանկ: 250 միլիգրամ ջրի շիշն արժե 5 դոլար:

Զբոսաշրջիկները ԱՄՆ-ի տարբեր մասերից և աշխարհի տարատեսակ կողմերից սիրով շրջում են կղզում, նկարվում, վայելում իսկապես շատ բնական տեսք ունեցող այդ հրաշքը:

Երեք օրվա ընթացքում Բրոդվեյում դիտեցինք 2 շոու: Առաջինը՝ «Մուլեն Ռուժը» և երկրորդը՝ «Տիտանիկը»:

«Մուլեն Ռուժը» Փարիզի հայտնի կաբարեն է, և ով եղել է Փարիզում, կհիշի ջրա-

ղացի վրա պտտվող քառաթևը, որը կարմիր գույնի է: Շոուն բարձրարվեստ էր, ու սիրո հետաքրքիր պատմություն էր կաբարեի ամենագեղեցիկ աղջկա ու աղքատ ուսանողի միջև: Կա նաև սիրո եռանկյունի. աղջկան սիրում է նաև մի մեծահարուստ: Շոուի երաժշտության որոշ հատվածներ Կալմանի օպերետներից էր: Սյուժեի զարգացման ընթացքը հիշեցնում է Դյումա որդու «Կամելիազարդ տիկինը» և Վերդիի «Տրուբադուր» օպերան:

Փոքր կղզուց հետո պետք է հասցնենք դիտել «Տիտանիկ» շոուն, որը ցերեկվա ժամը 3-ին էր: Բայց նաև պետք է հասցնենք այցելել կղզուն մոտիկ գտնվող հարավկորեացիների բացած Մերլին Մոնրոյի մասին պատմող ցուցահանդեսը՝ նրա մի քանի զգեստներով, իրերով ու բազում նկարներով և փաստաթղթերով: Մերլինը եղել է Հարավային Կորեայում ու արժանացել է ջերմ ընդունելության: Մինչ մենք դիտում ենք ցուցահանդեսը, մեզ մոտենում է միջին տարիքի մի կիրթ կորեուհի և խնդրում անցնենք մյուս դահլիճները՝ կորեական Ջենեսիս մակնիշի մեքենաները դիտելու: Իրոք, շատ շքեղ մարդատար մեքենաներ են՝ մեկը կարմիր, մյուսները սև գույնի տարբեր երանգներով: Նա հպարտորեն բացատրում է, թե դրանք իրենց որակով և այլ հատկանիշներով գերազանցում են գերմանական մեքենաներին: Նա համոզված է, թե մենք իտալացիներ ենք և կարող ենք գնել մեքենաներից որևէ մեկը: Աղջիկս տեղեկացնում է, որ հայեր ենք՝ Հայաստանից: Նա առաջարկում է խմել կորեական խոտաբույսերից պատրաստված համեղ թեյը, որն ինձ հիշեցնում է հայկական մասուրի թեյ և նորից շեշտում, թե ճիշտ է իրենց մեքենաներից գնելը:

Հասնում ենք Բրոդվեյ, ուր, ինչպես միշտ, դահլիճում ասեղ գցելու տեղ չկա:

Սկսվում է «Տիտանիկ» շոուն, որը ծաղրանմանություն է (պարոդիա) «Տիտանիկ» ողբերգության:

Ես դիտել եմ «Տիտանիկի» և՛ հին ֆիլմը՝ սև և սպիտակ, և՛ նորը՝ դի Կապրիոյի գլխավոր դերով, ու եթե ստիպեին նորից դիտել, ապա ես կտրուկ կհրաժարվեի վերստին այդ ողբերգությունը դիտել:

Շատ տարիներ առաջ Բոստոնի Գիտության թանգարանում դիտել եմ «Տիտանիկ» վավերագրական ֆիլմը, որը պատկերում էր ամերիկյան ու սովետական գիտնականները ինչպես են իջնում օվկիանոսի հատակը և նկարահանում խորտակված նավը: Նավի վրա նույնությամբ, առանց ջարդվելու, դեռ կային հատուկ սարքի մեջ շարված ափսեներ: Գիտնականները չժանգոտվող մետաղից կարմիր ծաղկեպսակ են ամրացնում անգերեզման զոհվածներին ի հիշատակ: Այս բոլորը պտտվում է իմ ուղեղում, և ես զարմանում եմ, թե ինչպես կարելի է ողբերգությունը վերածել կատակերգության, ու դահլիճը ցնծում է դերասանների սրամտությունից, ծափահարում են ու ծիծաղում:

Ես չեմ ծափահարում, սակայն փորձում եմ հասկանալ, թե ինչու շոուն յուրօրինակ ձևով վարում է՝ խոսելով ու երգելով, Սելին Դիոնի կրկնօրինակը, որն աղջկաս ասելով բացառիկ նման է իսկականին թե ձայնով, և թե արտաքինով, որովհետև տարիներ առաջ Նյու Յորքում եղել է նրա համերգին: Շոուի ընթացքում մեծ դեր ունի նաև Թինա Տյորների կրկնօրինակը, որի դերը կատարում է սևամորթ մի տղամարդ:

«Տիտանիկի» սիրո պատմությունը այստեղ էլ է կրկնվում:

Վերջում Սելին Դիոնի դերակատարուհին հանում է իր կեղծամը և կարճ մազերով՝ իր բնական տեսքով, ասում է, թե այս ամենը ծաղրանմանություն է:

Բոլոր դերասանները կատարյալ պլաստիկա ունեն, բեմում նրանց զգեստափոխությունը վայրկենական է, ինչպես որ արագ փոխվում են դեկորները:

Շոուի վերջում երկար-երկար օվացիա, ու ես էլ եմ ծափահարում:

Բոստոն քաղաքի կենտրոնում՝ մի քանի կիլոմետր երկարությամբ, կա նեղ ձգվող գեղեցիկ այգի, արձաններով, նստարաններով, մեծ ծառերով ու ծառերի տակ խնամված խիտ կանաչ խոտով:

Աղջկաս տունը շատ մոտ է այդ վայրին և մեր ամենօրյա տարածքն է, որով քայլում ենք: Եվ ահա մի օր այգում հայտնվում են 100 փղեր՝ մեծ և փոքր: Դրանք ուղղակի հոյակապ են, ուղարկված են Հնդկաստանից և նպատակ ունեն շրջել տարբեր երկրներում ու հիշեցնել, որ երկրագունդը միայն մարդկանց չի պատկանում, այլ բոլոր կենդանի էակներինն է, ու մարդը պետք է շատ զգույշ լինի բոլոր կենդանի էակների նկատմամբ:

Այդ փղերը, որոնք բնականին շատ նման են, հյուսված ճյուղերից են և հիշեցնում են Հնդկաստանի այն մասը, ուր շատ փղեր կան ու մարդկանց կողքին ապրում են հաշտ ու խաղաղ:

Սա շատ գեղեցիկ միջոցառում է, սակայն կարիք կա նաև հիշեցնել, որ տարբեր ազգեր հենց հիմա կոտորում են միմյանց՝ ագահության պատճառով:

Այս անգամ Բոստոնում գրադարան չգնացի, որովհետև աղջիկս ինձ անհրաժեշտ գրքերը տուն էր բերել Բոստոնի Աթենիում հայտնի գրադարանից: Թե ինչ գրքեր էին դրանք, այդ մասին արդեն գիտական հատուկ հոդվածներում:

Մասնագիտություն ընտրելը առաջին հերթին պատասխանատվություն է

Ես Մանե Գրիգորյանն եմ, սովորում եմ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի առաջին կուրսում: Եթե ինձ հարցնեին՝ երբևէ երազե՞լ եմ մանկավարժ դառնալու մասին, միանշանակ կպատասխանեի՝ ոչ: Ես երբեք ինձ ուսուցչի դերում չեմ պատկերացրել: Միշտ պատկերացրել եմ ինձ բժշկի դերում՝ մարդկանց օգնելիս, նրանց վերքերը բուժելիս, նրանց կյանքում ինչ-որ բան փոխելիս: Բայց, ինչպես ասում են, կյանքը հետաքրքիր անակնկալներ է մատուցում, և երբեք չես կարող պատկերացնել, թե մի օր որտեղ կարող ես հայտնվել, կամ կյանքը ինչ դեր կընտրի քեզ համար: Այդպիսի մի շրջադարձային անակնկալ էլ տեղի ունեցավ իմ կյանքում, և ես հայտնվեցի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Իրականում, որքան էլ զամանալի թվա, ես այնքան էլ չեմ հեռացել իմ մանկության երազանքից: Կհարցնեք՝ ինչպե՞ս: Պատասխանեմ՝ բժիշկը բուժում է մարդու մարմինը, իսկ ուսուցիչը պատասխանատու է նրա մտավոր և հոգևոր աշխարհի ձևավորման համար: Դարեր շարունակ ուսուցիչն է արթուն պահել մարդու միտքը, լուսավորել նրա ճանապարհը, կերտել դիմագիծն ու բարոյական կերպարը, մի խոսքով՝ կրթել սերունդներ: Հենց ուսուցչի շնորհիվ է, որ դարեդար սերունդներին է փոխանցվում մեր անցյալի պատմությունը՝ իր հաղթանակներով, դժվարություններով ու փորձություններով: Ուսուցիչն է այն մարդը, որի աշխատանքի արդյունքում ծնվում են գիտնականներ, բժիշկներ, արվեստագետներ, զինվորներ և բազմաթիվ այլ մասնագետներ, որոնք իրենց գիտելիքով ու աշխատանքով փոխում են աշխարհը: Մի պահ պատկերացնենք՝ եթե չլինեին ուսուցիչները, գուցե աշխարհը երբեք չապրեր այն զարգացումը, որի ականատեսն ենք այսօր: Չէ՞ որ յուրաքանչյուր մեծ գիտնականի, բժշկի, գրողի կամ որևէ այլ մասնագետի ճանապարհի սկզբում եղել է մի ուսուցիչ, որը հավատացել է նրան, սովորեցրել, ոգեշնչել և օգնել բացահայտելու իր հնարավորությունները: Իմ կարծիքով՝ ուսուցիչը ոչ միայն սերունդներ կրթելու և դաստիարակելու առաքելություն ունի, ուսուցչի մասնագիտությունը երկրի համար ունի ռազմավարական մեծ նշանակություն:

Հաղթանակները միայն պատերազմների դաշտում չեն կերտվում, նաև կերտվում են գիտության, մշակույթի, արվեստի, սպորտի և ցանկացած այլ բնագավառում, որը երկիրը դարձնում է կայուն, հզոր և մրցունակ: Իսկ այդ հաղթանակների հիմքում դարձյալ կանգնած են ուսուցիչները, որովհետև հենց նրանք են ձևավորում այն սերունդը, որն իր գիտելիքով, արժեքներով և աշխատանքով պետք է կառուցի վաղվա Հայաստանը:

Մասնագիտություն ընտրելը առաջին հերթին պատասխանատվություն է: Պատասխանատվություն ոչ միայն քո ապագայի, այլև այն մարդկանց ու միջավայրի հանդեպ, որոնց մի օր կարող են պետք գալ քո գիտելիքներն ու կարողությունները: Ես ուզում եմ, որ իմ ընտրած ճանապարհը պարզապես ինձ համար մասնագիտություն չդառնա: Ուզում եմ, որ այն ծառայի հասարակությանը, իմ երկրին: Ուսուցիչ դառնալով՝ իմ աշակերտների հոգում ես պետք է սերմանեմ ջերմություն ու սեր, հետաքրքրություն կրթության հանդեպ, օգնեմ արժևորելու այն ժամամակը, որը նրանք անցկացնելու են իրենց կրթօջախներում, սովորեցնեմ, որ գիտելիքը հնարավորություն է՝ ստեղծելու, զարգացնելու և մի օր սեփական երկրիդ առաջընթացում քո փոքր, բայց կարևոր ներդրումն ունենալու:

Սիրելի՛ ուսուցիչներ, անգնահատելի է ձեր դերն ու նշանակությունը արժանապատիվ, գիտակից և հայրենասեր սերունդ կրթելու գործում: Ես դեռ չգիտեմ՝ արդյո՞ք կկարողանամ մի օր դառնալ այնպիսի ուսուցիչ, ինչպիսին այսօր պատկերացնում եմ, բայց վստահ եմ մի բանում՝ եթե ընտրել եմ այս ճանապարհը, ապա կանեմ հնարավորն ու անհնարը, որպեսզի արժանի լինեմ այդ կոչմանը: Գուցե կյանքը փոխել է իմ մանկության երազանքի ճանապարհը, բայց ես հասկացել եմ, որ երազանքին հասնելու ուղիները երբեմն կարող են տարբեր լինել: Կարևորն այն է, թե ինչ հետք ես թողնում մարդկանց կյանքում: Եվ եթե բժիշկը կարող է բուժել մարդու մարմինը, ապա ուսուցիչը կարող է լուսավորել մարդու միտքը: Իսկ երբ փոխվում է մարդու միտքը, փոխվում է նաև աշխարհը: Այն պարզապես ավելի բարի և գեղեցիկ է դառնում:

Մանե Գրիգորյան
Կենսաբանության, քիմիայի և աշխարգարության ֆակուլտետ, 1-ին կուրս

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԴՊՐՈՑ

ՍԵՊՏԵՄԲԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁ Է

Ու այսօր կրկին զգում եմ նոր հագուստի բույրը, որը տարիներ առաջ ազդարարում էր՝ շուտով սեպտեմբերի 1-ն է... Գունավոր գրիչներն ու պես-պես տետրերը ոգեշնչում ու պարտավորեցնում էին լավ սովորել: Սրտի թրթիռով ու մեծ սպասումով բացումփակում էի այն մեծ պայուսակը, որը գիտելիքների պաշարի շտեմարանն էր: Հիմա այդ պայուսակումս արդեն իմ աշակերտների տետրերն ու ուսուցչական ձեռնարկս է, անգամ վարդագույն շրթներկ, որի մասին երազում էր փոքրիկ Լիլիթը: Կախարդական շրթներկն ունի իմ առաջին ուսուցչի բույրը, ու երբ այն քսում եմ, ինձ թվում է՝ իր պես մարգարիտ-մարգարիտ եմ խոսում:

Սեպտեմբերը վերադարձ է... Վերադարձ նոր կյանքի սկիզբ, վերադարձ մանկություն, վերադարձ ուսանողական քաղցր կյանք ու խենթ օրեր: Բայց վերադարձ՝ իբրև ուսուցիչ, բարդ է և միևնույն ժամանակ՝ հրաշալի: Այսօրվա սերունդն ամենաշատն ունի սիրո կարիք, ու հենց սիրուց էլ ծնվում է իրական աշակերտը: Սեպտեմբերն ինձ միշտ մտածել է ստիպում, մտածել չասված բառերի ու չսպիացած վերքերի մասին, մտածել փայլուն սերունդ դաստիարակելու և արժանի մարդ մեծացնելու մասին, շատ մտածելու, գործելու և ուժ ունենալու մասին: Այն երազանքների մասին, որոնք ճանապարհի կեսին կանգ առան, այն ժամանակի մասին, որն անդարձ չքացավ:

Սեպտեմբերին ինձ վերագտնում եմ աշակերտներիս շենշող աչքերի ու հավատով լցված հայացքի մեջ... Ու դարձա իմ երազած ուսուցիչը:

Լիլիթ Կարապետյան
Երևանի Վաղարշ Վաղարշյանի անվան №80 դպրոցի
Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
ՀՊՄՀ 2018 թ. շրջանավարտ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ

Հայրենաճանաչության դասեր Հայրենիքում

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից հայկական «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցի Հայաստան ժամանած սաները, ինչպես ամեն տարի, այս անգամ ևս բովանդակալից

միջոցառումների մասնակցեցին: Իհարկե, կարևորելով արվեստի դերն ու նշանակությունը, դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանը կազմակերպեց նրանց այցը Հայաստանի նկարիչների միություն, նաև հիմնադրի՝ քանդակագործ Արա Սարգսյանի թանգարանում, ինչպես նաև աշակերտներն առիթ ունեցան շրջելու նկարիչ Հակոբ Կոջոյանի թանգարանում, իսկ հանդիպումն անցկացրեց քանդակագործի թոռնուհին՝ տնօրեն Աննա Սարգսյանը: Հիշարժան էր նրանց համար ՀՀ վաստակավոր նկարիչ Մինաս Ավետիսյանի մասին պատմող անիմացիոն ֆիլմը. այստեղ նրանք իմացան այն մասին, որ իրենց դիտած «Գայանե» բալետի նկարչական ձևավորումը հենց Մինաս Ավետիսյանինն է:

Բազմազան և հետաքրքիր այցերի ընթացքում Խամաճիկների թատրոնն առանձնացավ «Երևանյան տրամվայ» ներկայացմամբ, որին մասնակցում էր դպրոցի սան Արինա Գրիգորյանը: Քանդակագործ Դավիթ Մինասյանի հեղինակած՝ մեծն շանսոնյե Շառլ Ազնավուրի արձանը տպավորիչ էր, նրա հայրենավեր գործունեությունը՝ ոգևորիչ, իսկ քիչ այն կողմ տեղադրված կենդանակերպերով շատրվանի պատմությունը՝ հետաքրքիր: Դպրոցի աշակերտները, շնորհիվ հայերենի իմացության, մեծ հպարտությամբ ընթերցեցին մեր հայ մեծերի անվանական աստղերը:

Ազգայինի ճանաչողության հիմնայուներից է հավատը, եկեղեցին, այդ իսկ պատճառով աշակերտներն այցելեցին Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի, լսեցին հոգևորականի խոսքն ու ստացան օրհնությունը, եղան Սուրբ Անանիայի մատուռում: Իհարկե, մայրաքաղաքը հնարավորինս ճանաչելի դարձավ Երևանի՝ 95-ամյակը բոլորող պատմության թանգարան այցով, ուր կայացավ հանդիպում տնօրենի՝ Գևորգ Օրբելու հետ: Այս նույն շենքում գործող Տիկնիկների թանգարանի այցին, որին իր սաների հետ մասնակցում էր նաև երաժշտության ուսուցչուհի Արփի Սամ-

վելյանը, սիրով միացավ բանաստեղծուհի Օլգա Դարյանը, իսկ երեխաներին շուրջ հազար տիկնիկների մասին

պատմեց թանգարանի տնօրենը՝ Մարինա Խաչմանուկյանը:

Կարևորելով ինքնությունը՝ աշակերտների համար կազմակերպվեց «Սասունցի Դավիթ» էպոսի հիման վրա նկարահանված «Փոքր Միհր» մուլտֆիլմի դիտումը, որն առանձնահատուկ իմաստ ունի, կարևոր ասելիք. Փոքր Միհրը կելնի իր քարայրից, երբ աշխարհին կտիրի արդարությունն ու բարությունը: Այս մուլտֆիլմը ուրույն իմաստ ձեռք բերեց, քանի որ սաները այն դիտեցին ինը տասնամյակ կանգուն «Մոսկվա» կինոթատրոնում, որն ամփոփում է հայկական կինեմատոգրաֆի փառահեղ պատմությունը:

Ամփոփելով հայրենիքում իր սաների հետ իրականացրած ամառային ծրագիրը՝ Շողիկ Փահլևանյանը Գիտելիքի օրը սիրով ներկա գտնվեց Մանկավարժական համալսարանի № 57 և Եղիշե Չարենցի անվան №67 դպրոցների գեղեցիկ միջոցառումներին և հանդիպումներ ունեցավ տնօրենների՝ Նաիրա Տողանյանի և Մարգարիտա Սարգսյանի հետ:

Հանդիպումների շարքում առանձնահատուկ տեղ ունեին նաև հանդիպումները Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Աշոտ Տեր-Գրիգորյանի Մայրենի լեզվի և նրա մեթոդիկայի դասավանդման ամբիոնի վարիչ Ջուլիետա Գյուլամիրյանի, ինչպես նաև «Մանկավարժական համալսարան» թերթի խմբագիր Սիլվա Ասրյանի հետ:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից
Մոսկվայի «Վերածնունդ» հայկական
կիրակնօրյա դպրոց

Կատարել եմ կյանքիս լավագույն ու ճիշտ ընտրությունը

Ամեն մասնագիտություն մի պատմություն է, բայց ուսուցչի մասնագիտությունը պատմություն կերտելու արվեստ է: Ինձ համար սա լոկ ապագա աշխատանքի կամ կարիերայի որոշում չէր. սա կյանքի մի նվիրական ուղի է, որով կարող եմ օգտակար լինել մարդկանց և իմ փոքրիկ, բայց արժեքավոր ներդրումն ունենալ նրանց կրթության, ձևավորման ու զարգացման վեհ գործում:

Դեռ վաղուց ինձ գրավել է երեխաների հետ աշխատելու, նրանց գիտելիք փոխանցելու և քայլ առ քայլ նրանց աճն ու առաջընթացը տեսնելու գաղափարը: Ինձ համար ուսուցիչ լինելը միայն դասավանդելը կամ դասագրքային ճշմարտություններ սովորեցնելը չէ, այլ նաև աշակերտին լսելու, հասկանալու, ոգևորելու և նրա մեջ սեփական ուժերի նկատմամբ անսասան վստահություն ձևավորելու արվեստ է: Ուսուցիչը նաև մարդկային հոգիներ կերտողն է, ում խոսքն ու օրինակը կարող են ուղենշային դառնալ երեխայի ողջ կյանքի համար:

Բանասիրական ֆակուլտետն ընտրեցի, որովհետև իմ ներաշխարհն ու հետաքրքրությունները միշտ կապված են եղել հայոց լեզվի և գրականության հետ: Հայոց լեզուն ինձ համար պարզապես ուսումնական առարկա կամ հաղորդակցման միջոց չէ. այն մեր ինքնության, դարավոր մշակույթի, պատմության և ազգային դիմագծի կարևորագույն հենասյունն է: Համոզված եմ՝ լավ մանկավարժ լինելու համար նախ պետք է անսահման սիրով ու խորությամբ ճանաչես այն առարկան, որը պատրաստվում ես փոխանցել սերունդներին: Այդ պատճառով էլ առանց վարանելու որոշեցի իմ մասնագիտական ուղին սկսել հենց Բանասիրական ֆակուլտետից:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն էլ լիովին համապատասխանում էր իմ նախասիրություններին, նպատակներին ու սպասելիքներին: Իմ երազանքն է դառնալ սիրված ուսուցիչ, և ինձ համար անչափ կարևոր էր սովորել այնպիսի միջավայրում, որտեղ կկարողանամ ձեռք բերել ոչ միայն հարուստ մասնագիտական գիտելիքներ, այլև զարգացնել ժամանակակից մանկավարժական հմտություններս: Առաջին իսկ օրվանից համալսարանի ջերմ մթնոլորտը, մասնագիտական հստակ ուղղվածությունն ու մեր հանդեպ հոգատար վերաբերմունքն ավելի ամրապնդեցին իմ այն համոզմունքը, որ կատարել եմ կյանքիս լավագույն ու ճիշտ ընտրությունը:

Համալսարանական կյանքի իմ առաջին տպավորությունները չափազանց ջերմ ու դրական էին: Մեզ ընդունեցին այնպիսի անկեղծությամբ ու ջերմությամբ, որ առաջին իսկ պահից մեզ զգացինք ոչ թե պարզապես նորեկ ուսանողներ, այլ այս մեծ ու լուսավոր ընտանիքի լիարժեք անդամներ: Այդ վերաբերմունքն օգնեց, որ ակնթարթորեն հաղթահարենք առաջին օրվա անխուսափելի հուզմունքն ու անծանոթ միջավայրի զգացողությունը: Արդեն առաջին իսկ օրերից համալսարանը դարձավ մի հարազատ վայր, որտեղ ես ինձ զգում եմ լիովին ինքնավստահ, հարմարավետ ու ոգեշնչված՝ պատրաստ նոր բարձունքներ նվաճելու: Դե ինչ, իմ լուսավոր ճանապարհ, ես արդեն ընթացքի մեջ եմ՝ վստահ քայլերով ու մեծ երազանքներով:

Սուսաննա Մարգարյան
Բանասիրական ֆակուլտետ
Հայոց լեզու և գրականություն, 1-ին կուրս

26 ՏԱՐԻ ԱՆՑ. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ լսարաններից դեպի հոգեբանական ծառայությունների նոր մշակույթ... երբեմն մասնագիտական ճանապարհի ամենակարևոր պատմությունները չեն սկսվում մեծ գրասենյակներից, պաշտոնական ծրագրերից կամ պատրաստի գաղափարներից: Դրանք ծնվում են համալսարանական լսարանում՝ երիտասարդ մարդկանց հանդիպումից, ընդհանուր հետաքրքրությունից, մասնագիտական երազանքից և այն համոզմունքից, որ սովորածը մի օր պետք է վերածվի իրական գործի: 2000 թվականը հենց այդպիսի մի սկիզբ դարձավ: Հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանական կրթության միջավայրում ձևավորվեց մի ընկերություն, որը տարիների ընթացքում պիտի վերածվեր մասնագիտական համագործակցության, իսկ հետո՝ հոգեբանական ծառայությունների զարգացման սեփական ճանապարհը ձևավորող թիմի: Այդ ճանապարհի հիմքում երեք անուն է՝ Մարիամ Մեհրաբյան՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Լուսինե Գրիգորյան՝ գեշտալտ հոգեբան, և Կիմա Գևորգյան՝ NLP պրակտիկ հոգեբան: Այսօր նրանց միավորում է ոչ միայն 26 տարվա ընկերությունը, այլև հոգեբանական ծառայությունը ժամանակակից պահանջներին համապատասխան զարգացնելու ձգտումը:

Հետաքրքիր է, որ Մարիամ Մեհրաբյանի համար այդ համալսարանական տարիները դարձան նաև անձնական կյանքի կարևոր սկիզբ. նույն կուրսում նա հանդիպեց իր ապագա ամուսնուն՝ այսօր արդեն ԿՎԹ հոգեբան Արկադի Մեհրաբյանին: Այսպիսով, համալսարանը նրանցից յուրաքանչյուրին տվեց ոչ միայն մասնագիտություն, այլև մարդկային կապեր, ընկերություն, ընտանիք և մի ամբողջ կյանքի համար արժեքավոր հիշողություններ: Մանկավարժական համալսարանի տված ամենակարևոր ժառանգությունը՝ ՀՊՄՀ-ի դերը հոգեբանության զարգացման գործում դժվար է գերագնահատել: Այն սերունդներ է կրթել՝ նրանց փոխանցելով ոչ միայն մասնագիտական գիտելիք, այլև մարդու, կրթության և հասարակության նկատմամբ պատասխանատվության զգացում: ՀՊՄՀ-ն իր սաներին տվել է ամենակարևորը՝ մտածելու մասնագիտական ձև, գիտական հիմք, մարդու նկատմամբ հարգանք և մանկավարժական մտածողություն: Այստեղ հոգեբանությունը չէր ընկալվում միայն որպես առանձին մասնագիտություն: Այն կապվում էր մարդու զարգացման, կրթության, ընտանիքի, երեխայի, ուսուցչի և հասարակության հետ: Սակայն յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր հնարավորություններն ու սահմանափակումները: Այդ տարիներին տեսական պատրաստվածությունը բավական ամուր էր, բայց գործնական բաղադրիչը միշտ չէր հասցնում ժամանակի պահանջներին: Ուսանողը կարող էր շատ բան իմանալ տեսությունից, սակայն իրական մարդու հետ աշխատելու, ժամանակակից թերապևտիկ մոտեցումներ կիրառելու, դեպքը մասնագիտորեն վերլուծելու և խորհրդատվական գործընթաց կառուցելու հնարավորությունները սահմանափակ էին: Եվ հենց այստեղ է սկսվում այս պատմության ամենակարևոր մասը: Այն, ինչ պակասում էր համալսարանում, նրանք լրացրին տարիների աշխատանքով. 26 տարին բավական երկար ժամանակ է՝ հասկանալու համար, որ մասնագետ լինելը նշանակում է շարունակաբար սովորել: Մարիամ Մեհրաբյանը, Լուսինե Գրիգորյանը և Կիմա Գևորգյանը իրենց մասնագիտական ճանապարհը չեն սահմանափակել համալսարանական դիպլոմով: Տարիների ընթացքում նրանք շարունակել են զարգանալ, խորացնել իրենց գիտելիքները, ձեռք բերել նոր գործիքներ և ձևավորել սեփական մասնագիտական փորձը: Այսօր նրանց գործունեության կարևոր առանձնահատկություններից մեկը հենց այն ձգտումն է, որ գիտելիքը չմնա միայն տեսության մակարդակում, այլ վերածվի մարդու համար իրական օգնության: Եթե համալսարանը տվել էր հիմքը, ապա տարիների մասնագիտական աշխատանքը դարձավ այդ հիմքի վրա կառուցված իրական գործնական փորձը: Այսօր հոգեբանական ծառայություններից ակնկալվում է ոչ միայն լսելու կարողություն, այլև մասնագիտական պատասխանատվություն, էթիկական մոտեցում, ժամանակակից մեթոդների կիրառում և յուրաքանչյուր մարդու խնդրին անհատական մոտեցում: Հայաստանում ևս հոգեբանական ծառայությունների մշակույթը զարգանում է, և այս ճանապարհին կարևոր է այն մասնագետների աշխատանքը, որոնք իրենց փորձով փորձում են բարձրացնել ոլորտի գործնական արժեքն ու մասնագիտական չափանիշները:

Երեք մասնագետ, տարբեր ուղղություններ՝ մեկ արժեք. Մարիամ Մեհրաբյանի մասնագիտական ճանապարհին գիտական և ակադեմիական փորձը միահյուսվում է գործնական հոգեբանության հետ:

Լուսինե Գրիգորյանի մասնագիտական գործունեության կարևոր ուղղություններից է գեշտալտ մոտեցումը՝ մարդու ապրումների, հարաբերությունների և «այստեղ և հիմա»-ի հետ աշխատանքի առանձնահատկություններով:

Կիմա Գևորգյանն իր հերթին աշխատում է NLP-ի և պրակտիկ հոգեբանության գործիքների շրջանակում:

Տարբեր մասնագիտական ուղղությունները նրանց չեն բաժանում: Ընդհակառակը՝ դրանք հնարավորություն են տալիս մարդու խնդրին նայել տարբեր տեսանկյուններից, լրացնել միմյանց և ավելի լայն պատկեր տեսնել: Եվ գուցե հենց սա է 2000 թվականին սկսված ընկերության ուժը՝ միմյանց լրացնելը, միասին սովորելը և միասին առաջ գնալը: 26 տարի՝ ընկերությունից մինչև մասնագիտական առաքելություն: Այսօր՝ 2026 թվականին, 2000 թվականի այդ ընկերությունն արդեն 26 տարվա պատմություն ունի: 26 տարի՝ համալսարանական լսարաններից մինչև մասնագիտական կայացում: 26 տարի՝ սովորելու, փորձելու, վերանայելու, նորից սովորելու և կատարելագործվելու ճանապարհ: 26 տարի՝ հոգեբանության հանդեպ նույն հետաքրքրությունը պահելու, բայց այն նոր ժամանակների պահանջներին համապատասխանեցնելու փորձ: Նրանց պատմությունը կարելի է դիտարկել նաև որպես մեկ սերնդի մասնագիտական ճանապարհի փոքրիկ արտացոլում: Այդ սերունդը սովորում էր մի ժամանակ, երբ հոգեբանության մասին հասարակական պատկերացումները դեռ բավական սահմանափակ էին: Այսօր նրանք աշխատում են մի իրականության մեջ, որտեղ հոգեբանական աջակցությունը գնալով դառնում է մարդու կյանքի բնական և անհրաժեշտ բաղադրիչ: Եվ եթե ՀՊՄՀ-ն նրանց տվել է մասնագիտական սկիզբը, ապա անցած 26 տարիները տվել են ամենակարևոր շարունակությունը՝ փորձը: Այսօր նրանք փորձում են այդ երկու արժեքները միավորել՝ համալսարանական գիտելիքն ու ժամանակակից գործնական հոգեբանությունը: Սա մեծ հայտարարությունների պատմություն չէ: Սա աշխատանքի, ընկերության, սովորելու և կանգ չառնելու պատմություն է: Հաջողությունը երբեմն հենց շարունակելու կարողությունն է: Մարիամ Մեհրաբյանի, Լուսինե Գրիգորյանի և Կիմա Գևորգյանի պատմության մեջ, թերևս, ամենագեղեցիկը ոչ թե որևէ մեկ ձեռքբերումն է, այլ շարունակականությունը: Երիտասարդական ընկերությունը կարողացել է պահպանվել կյանքի փոփոխությունների, մասնագիտական ճանապարհի և ժամանակի ընթացքում: Իսկ այսօր այդ ընկերությունը նաև պատասխանատվություն է՝ իրենց ձեռք բերած փորձը փոխանցելու, հոգեբանական ծառայությունների մշակույթը զարգացնելու և այն բացը, որը ժամանակին իրենք զգացել էին գործնական կրթության մեջ, մեծ քայլերով լրացնելու համար:

Նոր ուսումնական տարին միշտ նոր սկիզբ է: Այն իր հետ բերում է նոր սպասումներ, հանդիպումներ, գիտելիքներ և այն գեղեցիկ հավատը, որ կրթությունը կարող է փոխել մարդու կյանքը: Այս առիթով շնորհավորում ենք նոր ուսումնական տարվա մեկնարկը՝ մաղթելով բոլոր մանկավարժներին, հոգեբաններին, ուսանողներին և աշակերտներին խաղաղ, ստեղծագործ ու լուսավոր տարի: Թող յուրաքանչյուր լսարանում ու դասարանում ծնվեն ոչ միայն նոր գիտելիքներ, այլև վստահություն, ընկերություն, փոխադարձ հարգանք և մարդուն ավելի լավը դարձնելու ցանկություն: Թող ուսուցչի խոսքը լինի ոգեշնչող, հոգեբանի ներկայությունը՝ աջակցող, իսկ սովորողի ճանապարհը՝ հետաքրքիր ու իմաստավոր: Թող նոր ուսումնական տարին իր հետ բերի նոր գաղափարներ, նոր համագործակցություններ և նոր մասնագիտական ձեռքբերումներ: Եվ թող տարիներ անց մենք կրկին կարողանանք հետ նայել ու ասել՝ այսօրվա փոքրիկ քայլերից սկսվեց վաղվա մեծ ճանապարհը:

Բարի՛ երթ նոր ուսումնական տարվան: Թող այն լինի գիտելիքի, բարության, մարդկային ջերմության և նոր հնարավորությունների տարի:

Արկադի Մեհրաբյան
Մարիամ Մեհրաբյան
Լուսինե Գրիգորյան
Կիմա Գևորգյան
ՀՊՄՀ 2005 թ. շրջանավարտներ

Երազանքի հետևից

Լինել առաջին կուրսեցի՝ նշանակում է ամեն օր ապրել նոր տպավորություններով, բայց միևնույն ժամանակ քայլ անել դեպի մի մասնագիտություն, որը կանխորոշելու է քո ապագան: Համալսարանական այս առաջին շաբաթն ինձ համար ոչ միայն հարմարվելու, այլև սեփական ընտրությանս մասին կրկին խորհելու առիթ դարձավ, իսկ այդ ընտրության արմատները տանում են դեպի իմ դպրոցական տարիները:

Իմ կյանքում եղել են ուսուցիչներ, որոնք ոչ միայն գիտելիք են տվել, այլև սովորեցրել են մտածել, հավատալ սեփական ուժերին ու մարդ մնալ: Տարիներ հետո ես եկա այն համոզման, որ ուզում եմ ընտրել մի մասնագիտություն, որտեղ ամեն օրս իմաստ է ունենալու, իսկ աշխատանքս՝ իրական ազդեցություն մարդկանց կյանքի վրա:

Այս որոշումից հետո բնական քայլ էր համապատասխան բուհի ընտրությունը: Գիտեի, որ եթե ուզում եմ լավ մասնագետ դառնալ, պետք է սովորեմ այնտեղ, որտեղ կան ավանդույթներ, լավագույն դասախոսական կազմ, առողջ ակադեմիական միջավայր: Իսկ ֆակուլտետի և բաժնի ընտրությունն ինձ համար եղել է մանկության երազանք: Ես այն ընտրել եմ՝ լսելով իմ սրտին, իմ ներքին ձայնին, անտեսելով կողմնակի կարծիքները, որոնք փորձում էին կոտրել ինձ: Եվ այսօր ես արդեն գնում եմ իմ երազանքի հետևից: Ինձ համար շատ կարևոր ու պատասխանատու քայլ էր Սկզբնական կրթության ֆակուլտետ ընդունվելը: Հենց այստեղ է դրվում երեխայի կրթության, աշխարհայացքի ու մտածողության առաջին, ամենաամուր հիմքը: Գիտեի, որ ուզում եմ դառնալ մասնագետ, ում վստահում են երեխայի առաջին քայլերը դպրոցում:

Մեր համալսարանի մասին միշտ շատ լավ կարծիքներ էի լսել ավագ ընկերներիցս, իսկ ընդունվելուց հետո ինքս համոզվեցի, որ ընտրությունս ճիշտ էր: Այստեղ առաջին իսկ օրվանից զգացվում է ջերմ ու հոգատար վերաբերմունք մասնագիտության և ուսանողի նկատմամբ, և առաջին տպավորություններս վառ են ու աննկարագրելի: Սեպտեմբերի 1-ին լսարաններ մտնելուց հետո անհանգստությունս իսկույն անհետացավ: Դասախոսների վերաբերմունքը, կուրսընկերներիս ջերմությունն ու համալսարանի անցուդարձն անմիջապես ներքաշեցին ինձ համալսարանի առօրյա ռիթմի մեջ: Իհարկե, զգում եմ, որ պատասխանատվությունը շատ բարձր է լինելու, բայց դա միայն ոգևորում է:

Ինչ վերաբերում է ապագային՝ իմ սպասելիքները մեծ են. ուզում եմ այս տարիների ընթացքում վերցնել այն ամենը, ինչ տալիս է համալսարանը՝ ոչ միայն տեսական գիտելիք, այլև ինքնուրույն մտածողություն ու մասնագիտական վստահություն: Իմ նպատակն է ձևավորվել որպես պատրաստված ու լիարժեք մասնագետ, որը վաղը դպրոց կմտնի նոր գաղափարներով, էներգիայով և աշակերտներին իր հետևից տանելու կարողությամբ:

Համալսարանն ինձ համար պարզապես դասի գնալ-գալու վայր չէ. սա այն միջավայրն է, որտեղ դասախոսների փորձի ու անմիջական շփման շնորհիվ ես քայլ առ քայլ հասունանալու եմ որպես ուսուցիչ: Վստահ եմ, որ համալսարանական այս պատերի ներսում անցկացրած տարիները ոչ միայն մասնագիտություն են տալու, այլև օգնելու են ստեղծել ինքնուրույն ձեռագիր: Լիահույս եմ, որ այս տարիները դառնալու են իմ կայացման ամենաամուր հենասյունը, և ես պատվով եմ կրելու այս ֆակուլտետի սան լինելու կոչումը:

Ուրախ եմ, որ այստեղ եմ և մեծ պատրաստակամությամբ եմ սկսում իմ ուսանողական ճանապարհը:

Միլենա Չափյան
Սկզբնական կրթության ֆակուլտետ
«Տարրական կրթություն և մեթոդիկա» մասնագիտության 1-ին կուրս

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ